


**ՀՀ ՔԱՂԱՔ ԳՅՈՒՄՐԻ Գ. ՆԺԴԵՀ ՓՈՂՈՑ 9/10 ՀԱՍՑԵՈՒՄ ԲՆԱԿԵԼԻ  
ՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ**



**Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ**

Կառուցապատող՝  
«ԴԼՆԴ ԷԴ ԻՆՎԵՍՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ տնօրեն



2021թ.

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ** ..... 3

Տեղեկություններ ձեռնարկողի մասին ..... 3

Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը ..... 4

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ** ..... 7

**2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՄՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ)**..... 10

a. Ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումներ..... 10

b. Կառույցի տեխնիկատնտեսական ցուցանիշները ..... 13

c. Նախապատրաստական աշխատանքներ ..... 16

d. Հողային աշխատանքներ ..... 17

e. Աշխատանքների կատարման սխեմա ..... 17

f. Շինարարական աշխատանքների բնութագրերը և տիպերը ..... 20

g. Շինարարության կազմակերպում ..... 20

h. Շինարարական կոնստրուկցիաների մոնտաժ ..... 21

i. Ջրամատակարարում և ջրահեռացում ..... 23

j. Ջեռուցում և գազամատակարարում ..... 24

k. Անձրևաջրերի հեռացում /հեղեղատար կոյուղի/ ..... 24

l. Կանաչապատ տարածքների ոռոգում ..... 25

m. Նյութերի և բնառեսուրսների օգտագործում ..... 25

2.1. Շինարարության փուլում ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն ..... 26

**3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ**..... 27

3.1. Տարածքի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները..... 27

3.2. Կլիման ..... 27

3.3 *Տարածքի ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները*..... 29

3.4. Հիդրոերկրաբանություն..... 30

3.5. Տարածքի սեյսմիկ բնութագիրը ..... 31

3.6. Մթնոլորտային օդի որակի բնութագիրը ..... 31

3.7. Ջրային ռեսուրսներ..... 33

3.8. Հողային ռեսուրսներ և հողօգտագործում..... 37

3.9. Կենսաբազմազանություն ..... 37

3.9.1. Բուսական աշխարհ ..... 38

3.9.2. Կենդանական աշխարհ ..... 38

3.10. Նախատեսվող գործունեության տարածաշրջանի նկարագիրը և սոցիալ տնտեսական վիճակը 39

3.11. Պատմամշակութային հուշարձաններ և բնության հատուկ պահպանվող տարածքներ ..... 40

**4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՄԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆԿԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈՒԽՆԱՑՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ** ..... 44

4.1 Ռիսկերի գնահատում ..... 44

4.2 Օղի աղտոտում ..... 44

4.3 Աղմուկի և թրթռումների ազդեցություն..... 45

4.4 Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն..... 45

4.5 Բնապահպանական միջոցառումներ..... 46

4.5.1. Մթնոլորտային օդ ..... 46

4.5.2. Ջրային ռեսուրսներ..... 46

4.5.3. Հողային ռեսուրսներ..... 47

4.5.4. Աղմուկ..... 47

4.5.5. Կենսաբազմազանություն ..... 47

4.5.6. Թափոնների և այլ նյութերի կառավարումը..... 48

4.6 Հնարավոր արտակարգ իրավիճակները և մեղմացման միջոցառումները..... 50

4.7 Աշխատանքի անվտանգություն և առողջություն ..... 51

4.8 Հակիրդեհային միջոցառումներ..... 52

4.9 Կանաչապատում..... 52

**5. ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ և ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ..... 56**

**6. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ..... 56**

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ Հավելված 1..... 57

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ/ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ/ ՊԼԱՆ Հավելված 2..... 62

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՇԵՆՔԻ ԵՌԱԶՍՓ ՊԱՏԿԵՐ Հավելված 3 ..... 65

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ Հավելված 4..... 66

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ..... 67

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

**Տեղեկություններ ձեռնարկողի մասին**

<b>Նախատեսվող գործունեություն</b>	ՀՀ քաղաք Գյումրի գ. Նժդեհ փողոց 9/10 հասցեում բնակելի համալիրի կառուցում
<b>Նպատակը</b>	Բնակելի համալիրի կառուցում
<b>Նախագծի պատվիրատու</b>	«Դ ԸՆԴ ԷԴ ԻՆՎԵՍՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
<b>Կառուցապատող</b>	«Դ ԸՆԴ ԷԴ ԻՆՎԵՍՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
<b>Ձեռնարկողի հասցե</b>	ՀՀ, քաղաք Երևան, Գրիբոյեդովի փ.2.1/1/4 փողոց,
<b>Ձեռնարկողի կոնտակտային տվյալներ, էլ փոստ, հեռախոս</b>	Էլ. փոստ՝ <a href="mailto:gevorgalaverdyan2020@gmail.com">gevorgalaverdyan2020@gmail.com</a> , Հեռ.՝ 041 96 66 61
<b>Կառուցապատվող տարածքի գտնվելու վայրը</b>	ՀՀ Շիրակի քաղաք Գյումրի գ. Նժդեհ փողոց 9/10 հասցե
<b>Կառուցապատվող տարածքի մակերեսը</b>	1.2923 հա, կամ 12926.0 մ <sup>2</sup> , որից կառուցապատման մակերեսը՝ 5772.0 մ <sup>2</sup> /վերգետնյա շինություն/

«Դ ԸՆԴ ԷԴ ԻՆՎԵՍՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ մտադիր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաք Գյումրի գ. Նժդեհ փողոց 9/10 հասցեում բնակելի համալիրի կառուցման աշխատանքային նախագծի վերաբերյալ ստանալ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (21 հունիսի, 2014) հոդված 14-ի կետ 6-ի համաձայն, ք. Գյումրի Գ. Նժդեհ փողոց 9/10 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախագծային փաստաթուղթը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման և փորձաքննության, քանի որ ընդհանուր կառուցապատվող տարածքի մակերեսը գերազանցում է 1500 մ<sup>2</sup>-ը (բնակելի համալիրի կառուցապատման մակերեսը կազմում է 5772.0մ<sup>2</sup>):

Ելնելով շրջակա միջավայրի վրա ազդեցության աստիճանից, նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Գ» կատեգորիայի, որի համար պահանջվում է Նախնական գնահատման հայտի պատրաստում: Նախնական գնահատման հայտի բովանդակությունը մշակվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջների համաձայն:

Գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների գնահատման և վերլուծության արդյունքներն ամփոփվել են սույն նախնական գնահատման հայտում: Գնահատման նպատակն է նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի ու մարդու առողջության վրա հնարավոր վնասակար ազդեցությունների կանխատեսումը, կանխարգելումը, նվազեցումը կամ բացառումը:

Գործունեության իրականացման ընթացքում հիմնական բնապահպանական և սոցիալական ռիսկերն են՝

➤ Օդային ավազանի աղտոտում՝ շինարարական աշխատանքների և շինարարական տեխնիկայի շարժիչների շահագործման ընթացքում,

➤ Շինարարության փուլում մերձակա բնակչությանը /հարևանությամբ առկա բնակել և հասարակական օբյեկտներ/ պատճառովող անհանգստություն՝ մեքենաների և տեխնիկայի տեղաշարժից,

➤ Շինարարական մեքենաների և տեխնիկայի պատճառով տեղի երթևեկության խափանում,

➤ Հողերի դեգրադացիա և էրոզիա բուսածածկի վնասման արդյունքում,

➤ Հողերի և ջրային ռեսուրսների աղտոտում շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում առաջացող արտահոսքերով,

➤ Հողերի աղտոտում՝ շինարարության և շահագործման ընթացքում առաջացող թափոններով, շինարարական և կենցաղային աղբով,

➤ Աշխատողների առողջությանը հասցվող վնաս՝ գործունեության իրականացման շինարարության և շահագործման ընթացքում:

Հայտում բնապահպանական ելակետային տվյալների հիման վրա առաջարկվել և ամփոփվել են վերը նշված ազդեցությունների և շրջակա միջավայրի մյուս բաղադրիչների վրա կանխարգելմանը և նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր:

Նախնական գնահատման հայտի մշակման համար օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

➤ Նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը,

➤ Նախատեսվող գործունեության ընթացքում հավաքագրված տվյալներն ու տեղեկատվությունը,

➤ Տարածաշրջանի վերաբերյալ վերլուծությունները, սխեմաները,

➤ Շահագրգիռ կողմերի հետ բանակցություններն ու քննարկումները:

Գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման փուլում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

➤ Աշխատանքային նախագծի հիման վրա նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի մշակում,

➤ Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումների անցկացում

➤ Բնապահպանական փորձաքննության նպատակով նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի և հանրային քննարկումների արդյունքների (ներառյալ՝ արձանագրություն, մասնակիցների ցանկ տեսաձայնագրություն) ներկայացում շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ:

ՀՀ գործող օրենսդրությունը պահանջում է նախատեսվող գործունեության համար իրականացնել հանրության տեղեկացում և քննարկումներ՝ նախագծման, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման, փորձաքննության փուլերում:

Նախատեսվող գործունեության նախնական գնահատման փուլում Գյումրի քաղաքում արդեն իսկ անցկացվել են հանրային քննարկումներ:

**Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը**

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական

ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

Քաղաք Գյումրի գ. Նժդեհ փողոց 9/10 հասցեում բնակելի համալիրի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են բնապահպանական ոլորտին առնչվող օրենսգրքերում և իրավական ակտերում: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերը ներկայացված են ստորև.

**ՀՀ Սահմանադրություն** (ընդունված 06.12.2015թ.) – 12-րդ հոդվածը <<**Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը**>> սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների բանական օգտագործման վերաբերյալ՝ հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

**«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք** (2014) - Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման «հայեցակարգերի» պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Համաձայն՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի, 14-րդ հոդվածով սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրության փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները: Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության: Շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների դասակարգվում են երեք կատեգորիայի՝ «Ա», «Բ», «Գ», ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Օրենքը հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:

**«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք** (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2007թ.) - կարգավորում է արտանետման թույլտվությունները և սահմանում է մթնոլորտային օդի աղտոտման սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները: Աշխատավայրերում, բնակելի և հասարակական վայրերում, բնակարանային տնտեսության վայրերում, ինչպես նաև շինարարական հրապարակներում աղմուկի թույլատրելի սահմանարական նորմերը սահմանվում են ենթաօրենսդրական ակտով:

**«ՀՀ հողային օրենսգիրք» (2001)** - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

**«Հողօգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենքը** (2008թ) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու

ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

**«Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004)** - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները: ՀՀ Կառավարության 121-Ն որոշումը, որը վերաբերում է ՀՀ-ում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003), պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին:

**«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005)**- կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

**«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք (2000)** - կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման ընթացակարգերը:

**«Հարկային օրենսգիրք» ՀՀ օրենքը:**

**«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998)** - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14,15,16, Գլուխ 6):

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Սույն նախնական գնահատման հայտում ներկայացված նախատեսվող գործունեության ձեռնարկող է հանդիսանում <<Դ ԸՆԴ ԷԴ ԻՆՎԵՍՏ ԳՐՈՒՊ>> ՍՊ ընկերությունը /գրանցման ամսաթիվ՝ 16.03.2021 հասցե՝ ՀՀ, քաղաք Երևան, Գրիբոյեդովի փ.2.1/1/4 Արաբկիր 0051/:

Նախատեսվող գործունեություն է հաղիսանում՝ գ. Գյումրի Գ. Նժդեհ փողոց 9/10 հասցեում բնակելի համալիրի կառուցումը:

Գործունեության ենթակա տարածքը գտնվում է գ. Գյումրի Գ. Նժդեհ, Պ Պռոշյան, և Մ.Մկրտչյան փողոցների միջանկյալ հատվածում: Տարածքը նախկինում եղել է արդյունաբերական տարածք, անմիջապես տարածքի հարևանությամբ Գյումրիի տեքստիլ ֆաբրիկան է: Տարածքին կից հողամասերն են՝ Մ. Մկրտչյան փողոցը, բազմաբնակարան բնակելի շենքեր, առևտրի կենտրոն: Կառուցապատվող հողամասի մակերեսը կազմում է 12926.0 մ<sup>2</sup>, որտեղ առկա են նախկինում արտադրական նպատակով օգտագործված, քանդման ենթակա շենք-շինությունները /գազալցակայանի սպասարահ, կոմպրեսորային, մարտկոցային, արհեստանոց/: Ամենամոտ կառուցապատումը նախագծված տարածքից գտնվում է մոտ 25 մ հեռավորության վրա: Նախագծում հաշվի է առնվել հարևան կառույցների շահագործման նորմատիվ պահանջները:

Գյումրի քաղաքի Գ. Նժդեհ փողոց 9/10 հասցեում բնակելի համալիրի նախագծման համար Գյումրիի քաղաքապետարանի կողմից 24.03.2021թ տրվել է N 6. նախագծման թույլտվությունը (ճարտարապետա-հատակագծային առաջադրանք):

Կառուցապատման աշխատանքներն իրականացվելու են բնակավայրերի՝ նպատակային նշանակության, բնակելի և հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողատեսքում: Նախագիծը մշակվել է անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի վկայականով /հ 13042021-08-0042 տրվ. 13.04.2021թ./ ամրագրված հողամասի սահմաններում, որը դրադեցնում է 0.1, 1.192609 հա /ընդհանուր՝ 1.1292609հա/ հա մակերես և սեփականության իրավունքով պատկանում է <<Դ ԸՆԴ ԷԴ ԻՆՎԵՍՏ ԳՐՈՒՊ>> ՍՊ ընկերությանը:

Կառուցապատվող հողամասը գտնվում է նախկին տեքստիլ գործարանի հարևանությամբ և նախկինում օգտագործվել է որպես արտադրական տարածք: Հետագայում կառուցվել է գազալցակայան, ինչը ներկայումս չի շահագործվում: Ներկայումս տարածքը մասամբ մաքրված է շինարարական աղբից և հարթեցված է, սակայն տարածքի մի մասում դեռևս պահպանվում են նախկին արտադրական շենք շինությունները, կամ դրանց հիմքերը. որոնք կիսաքանդ վիճակում են և ենթակա են քանդման: Գազալցակայանի քանդման ենթակա շենք-շինությունների մակերեսը ընդհանուր կկազմի 160քմ: Քանի որ տարածքը նախկինում ծառայել է արտադրական նպատակով և ամբողջովին կառուցապատված է եղել շենք-շինություններով, բացակայում է հողաբուսական շերտը և տարածքը ներկայացված է հիմնականում լիցքային գրունտներով: Հողամասում, տեղ-տեղ՝ գրունտների հետ հողախառն մասերում հանդիպում են անկանոն աճած՝ մանր և միջին տրամագծերով ծառեր, թփեր, կամ սիզախոտ: Ծառերը հիմնականում հողամասի եզրային մասում են, դրանց մի մասը չորացած են: Ծառերի բների տրամագծերը տատանվում են՝ 5-15 սմ: Գյումրու քաղաքապետարանի համապատասխան մասնագետի հետ



համաձայնեցված ճշտվել են ծառերի տեսակները, չորածած ծառերը կհատվեն, իսկ եթե անհրաժեշտ կլինի վերատնկել ծառերը, կենսունակները կտնկվեն կառուցապատվող հողամասի եզրամասում: Գյումրու քաղաքապետարանի կողմից տրվել է թույլտվություն շինարարական աշխատանքներին խոչնդոտող ծառերը հատելու համար, այն պայմանով, որ պահպանվի անվտանգության կանոնները /հայտում կցված է թույլտվությունը/:

Հողամասին կից տարածքներով անցնում են գործող ինժեներական գծերը և հաղորդակցուղիները:



Շինհրապարակի տեղադիրքը Google Earth ծրագրի լուսանկարում  
Նկար 1. Տարածքի իրավիճակային սխեմա

**2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՄՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ)**

**a. Ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումներ**

Բնակելի համալիրը նախատեսված է կառուցել ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գ. Նժդեհ փողոց 9/10 հասցեում հատկացված հողամասում՝ բնակելի կառուցապատման գոտում, որի հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ բնակելի և հասարակական կառուցապատման: Տարածքը հարթ է, ռելիեֆի բացարձակ նիշերը տեղամասում տատանվում են 1533,0-1551,0 մետրերի սահմաններում:

Նախագծը կատարված է համաձայն՝ պատվիրատուի կողմից տրված առաջադրանքի, Գյումրիի քաղաքապետարանի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի և գործող քաղաքաշինական կանոնների ու նորմերի:

Կառուցապատվող հողամասի մակերեսը կազմում է 12926.0 մ<sup>2</sup>, որտեղ առկա են նախկինում արտադրական նպատակով օգտագործված, քանդման ենթակա շենք-շինությունները /գազալցակայանի սպասարահ, կոմպրեսորային, մարտկոցային, արհեստանոց/: Ապամոնտաժման եղանակով մեկ-մեկ հանելով քարերը, կրկին օգտագործվելու են շինարարական այլ աշխատանքներում, կամ կհեռացվեն որպես շինարարական թափոններ: Տարածքի մի մասը ներկայումս մաքրված է նախկինում կուտակված շինադրոշմ: Տարածքում ապամոնտաժման կամ քանդման աշխատանքները առաջնահերթ կիրականացվն, որից հետո կատարվելու են հողային աշխատանքներ: Հողային ծածկույթը ներկայացված է հիմնականում լիցքային գրունտներով, տեղ-տեղ գրունտը հողախառն մակերևութով է՝ ծածկված խոտային ծածկույթով: Տարածքում շինարարական աշխատանքներին խոչնդոտող ծառաթփուտային բուսականությունը /ընդհանուր՝ 15 հատ միջին ու փոքր տրամագծերով ծառեր և թփեր/ Գյումրու քաղաքապետարանի հետ համաձայնեցված կհատվեն, կամ կվերասնկվեն:

Ուսումնասիրվող տեղամասում շինություն կառուցելու համար, որպես հիմնատակ ծառայում են խճային գրունտները և բազալտները:

Համաձայն առաջադրանքի նախագծվել է բնակելի համալիր մեկ ստորգետնյա, հինգ հարկ, և վեցերորդ հետնահանջող վերգետնյա հարկերով:

Համալիրը կազմված է տաս մասնաշենքից, որոնք իրարից անջատված են դեֆորմացիոն կարանով:

Համալիրի նկուղային հարկերը նախատեսված է ավտոկայանատեղի՝ թվով 152 ավտոտրանսպորտի համար: Բնակելի համալիրը ունի 12 մուտք, բնակելի մուտքերը նախատեսված է ներքին բակից: Համալիրի Մհեր Մկրտչյան փողոցի կողմից առաջին հարկը նախատեսված են հասարակական սպասարկման և գրասենյակային տարածքների համար: Համալիրում նախատեսված է թվով 342 բնակարան՝ մեկ, երկու և երեք ննջարաններով /30.8ք.մ.-120.8ք.մ. մակերեսներով/: Համալիրում նախատեսված է 12 հիմնական աստիճանավանդակ, յուրաքանչյուրում մեկ վերելակ: Նախագծով մշակվել է տարածքի բարեկարգման, կանաչապատման նախագիծ: Կառուցապատման խտության գործակիցը 2.5 է: Հողամասի 35%-ը կանաչապատվելու է, իսկ է 65%-ը համաձայն նախագծման թույլտվության կառուցապատվելու է /ներառյալ՝ սավաճքներ, ճանապարհներ, անջրանցիկ մակերեսներ/:

Բնակելի համալիրի մուտքերը նախատեսված են ներքին բակից: Համալիրի առաջին հարկերը նախատեսված են հասարակական սպասարկման և գրասենյակային տարածքների համար: Նկուղային հարկում նախատեսվում է ստորգետնյա

ավտոկանգառներ/ ոչ գազաբալոնային սարքավորումներով ավտոտրանսպորտի համար/ որոնց համար նախատեսված են նորմերով սահմանված ենթակառուցվածքներ, որոնք կմիանան գոյություն ունեցող ենթակառուցվածքներին՝ մատուցող կազմակերպությունների տեխնիկական պայմաններին համաձայն: Բոլոր վերելակներն իջնում են ստորգետնյա հարկ և կապվում են ավտոկայանատեղի հետ՝ նախամուտքի միջոցով: Ավտոկայանատեղիի հատվածում նախատեսված են տարհանման սանդղավանդակներ՝ ըստ նորմերի, որոնք ունեն ելք դեպի տարածք: Ապահովվելու է ավտոտրանսպորտի անվտանգ ելումուտ դեպի տարածք: Նախատեսվել են նաև բացօթյա կայանատեղիներ:

Շենքի կոնստրուկտիվ սխեման լուծված է միաձույլ ե/բ շրջանակակապային լուծումներով, որպես հիմնական շին նյութ ընտրված է՝ ե/բ կոշտության պատեր: Շենքերի միջև ստորգետնյա ավտոկայանատեղիների կոնստրուկտիվ համակարգը՝ շրջանակային: Կից շինությունները միմյանցից առանձնացված են հակասեյսմիկ կարերով: Նախատեսված կոնստրուկցիաներն ունեն հետևյալ կոնստրուկտիվ լուծումները.

- Հիմնակմախքը՝ միաձույլ երկաթբետոն,
- Ծածկերը՝ պարագծով հենված միաձույլ ե/բ սալեր,
- Աստիճանները՝ միաձույլ երկաթբետոն:

Ստորգետնյա ավտոկայանատեղիի բարձրությունը տրված է բացարձակ նիշերով, 0.00 հարաբերական նիշը համապատասխանում է բացարձակ նիշին:

Շենքի շուրջը սալվածքի նիշը մուտքերի նիշից տարբերվում է 5սմ-ով: Ներքին բակի ավտոճանապարհից սալվածքի վերևի նիշերի տարբերությունը կազմում է /15-25սմ/ սալվածքի առանձին մասերում հաշմանդամություն ունեցող անձինք տվյալ բարձրությունը հաղթահարելու համար նախատեսված են թվով 6 թեքահարթակներ:

Ստորգետնյա ավտոկայանատեղին հատակի նիշը ցածր է գրունտի համահարթեցման նիշից 3.3-1.5մ: Ավտոկայանատեղին ողջ արտաքին պարագծով պարփակված է 200մմ հաստությամբ ե/բ պատով՝ ամրանավորված երկտակ ամրանային ցանցով, որը հնարավորություն է տալիս անհրաժեշտություն դեպքում նկուղային հարկը ծառայեցնելու որպես թաքստոց:

Ստորգետնյա հարկում ջրամատակարարման և հակահրդեհային միջոցառման համար տեղադրված են պոմպակայաններ, որտեղ տեղադրվելու են բարձր ՕԳԳ ունեցող պոմպեր:

Ընդհանուր բակը բարեկարգվում է կանաչապատ գոտիով, մայթերով, ճանապարհով, խաղահրապարակով: Ջրահեռացումը բակից իրականացվում է անմիջապես տարածքի հարևանությամբ, ասֆալտի տակով անցնող ջրահեռացման ցանցով:

Արտաքին երեսպատումը նախատեսված է իրականացնել տրավերտինե, տուֆե և բազալտե սալերի համադրությամբ: Շինարարության ժամանակ օգտագործվելու է սրբատաշ և կոպտատաշ քար, երկաթբետոն, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման նյութեր և այլն:

Շենքերի արտաքին պատերը իրականացվում են լցնված շլակաբետոնե բլոկերով: Դրսից տեղադրվում են ջրամեկուսիչ սալեր փրփրապոլիուրետանից՝ 6սմ հաստությամբ, հետո ամրացված կապրոնե ցանցի վրա կատարվում են հարդարման աշխատանքներ՝ հետագայում ներկելով ճակատային դիմացկուն ֆասադային ներկերով:

Ներքին հարդարման աշխատանքները հետևյալն են.

1. Միջնորմները իրականացվում են 9սմ հաստության խարամաբետոնե բլոկներով, որոնք սենյակներում սվաղվում են գիպսոնիտե շաղախով, իսկ թաց կետերում (սանհանգույցներում) սվաղվում են ց/ա շաղախով, որից հետո երեսապատվում են կերամիկական սալիկներով:

2. Հատակները սանդղավանդակներում, միջանցքներում իրականացվում են մամլագրանիտե սալերով, իսկ բնակարաններում (խոհանոցում, միջանցքներում, սանհանգույցներում) կերամիկական սալիկներով:

3. Ընդհանուր օգտագործման տարածքներում օգտագործվող նյութերն են՝ գիպսաստվարաթուղթ, լատեքսային ներկ, երեսապատման սալիկներ: Ննջարաններում և ընդհանուր սենյակներում նախատեսված են լամինատե հատակներ, իսկ պատշգամբներում՝ մամլագրանիտե սալեր:

4. Տանիքները իրականացված են հարթ, օգտագործվող ներքին ջրահեռացումով, ջրհավաք ձագարների միջոցով:

Տվյալ տարածքի համար ձյան նորմատիվային ճնշումը 70կգ/մ2 է: Քամու արագության նորմատիվային ճնշումը 45 կգ/մ2: Տվյալ մեխությունները հաշվի են առնված շենքի հիմնակմաղքի հաշվարկներում՝ աշխատանքային նախագծում:

Բնակելի համալիրի արտաքին ինժեներական ցանցերի նախագծերը /ջրամատակարարում, ջրահեռացում, էլեկտրամատակարարում, գազամատակարարում/ մշակվել են համաձայն ծառայությունները մատուցող կազմակերպությունների տրանադրած տեխնիկական պայմանների: Գազամատակարարման, ջրամատակարարման, էլեկտրամատակարարման նախնական տեխնիկական պայմանները ներկայացված են նախնական գնահատման հայտի հավելվածների բաժնում:

Համաձայն տեխնիկական պայմանների էլակետային տվյալների ջրամիացումն իրականացվում է նախագծված տարածքի անմիջապես հարևանությամբ, Մհեր Մկրտչյան փողոցով անցնող 100մմ տրամագծի ջրագծից՝ 100մմ միացումով: Ջրահեռացման միացման կետը Գարեգին Նժդեհի պողոտայով անցնող, գործող 500 մմ տրամագծի կոյուղագիծն է: Նշված աշխատանքները կիրականացվեն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից տրամադրված տեխնիկական պայմանի և համաձայնեցված նախագծի համաձայն:

Ջեռուցումը և տաք ջրամատակարարումը բնակարաններում և տարածքներում իրականացվում է անհատական կաթսաների միջոցով: Գազամատակարարումը իրականացվում է քաղաքային ցանցից՝ տեղադրելով գազամատակարարման բաշխիչ-վահանակ: «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ կողմից տրվել է տեխնիկական պայմաններ բնակելի համալիրի գազամատակարարման համար: Բոլոր մասնաշենքերի գազամատակարարման խողովակներն անցնում են ստորգետնյա հասվածով, շենքի մոտ բարձրանալով մտնում են սանդղավանդակին կից պատշգամբ, որտեղ ամեն հարկում տեղադրված են գազի հաշվիչները բնակարանների համար:

Բնակելի համալիրի էլեկտրասնուցումը հնարավոր կլինի իրականացնել ըստ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ «Ղարս» մասնաձյուղի կողմից տրված էլեկտրացանցին միացման տեխնիկական պայմանների Գյումրի-1 ենթակայանից, կառուցելով 6կվ մալուխային գիծ և նոր ենթակայան:

Բնակելի շենքերի դասավորությունը պայմանավորված է հողամասի դիրքով հեռավորությունների նորմատիվ պահանջներով, բնական լուսավորության հաշվարկներով բնական լանդշաֆտը հնարավորինս պահպանելու նպատակով:

Բնակելի շենքի արտաքին պատերը նախատեսվում է իրականացնել մեկ շարք (200 մմ հաստ.) ամրանավորված պեմզաբլոկներով: Էներգոարդյունավետության և ջերմամեկուսացման տեխնիկական լուծումների նպատակով բոլոր պատերը արտաքինից կջերմամեկուսացվեն (40 մմ հաստ.) փրփրապոլիստիրոլային ջերմամեկուսիչ սալերով և կերեսպատվեն (40 մմ հաստ.) բազալտե և տրավերտինե սալերով:

Բնակելի համալիրի տարածքում նախատեսվում են տեղադրել կենցաղային աղբի հավաքման համար նախատեսվող աղբամաններ, որոնց տեղադրման տեղերը հաշվի կառնվեն քաղաքապետարանի հետ համաձայնեցված:

Նախագծով նախատեսված է արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության համապատասխան միջոցառումներ:

Կառույցում նախատեսված է նաև հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի համար տեղաշարժվելու անհրաժեշտ պայմաններ:

Շենքերի սեյսմազինվածության մակարդակը նախատեսված սեյսմիկ - III սեյսմիկգոտու համար (9 Բալ և ավելի):

Նախագիծը մշակված է համաձայն ՀՀ տարածքում գործող հետևյալ նորմատիվային փաստաթղթերի՝

ՀՀՇՆ 30-01-2014 քաղաքաշինություն. քաղաքային եվ գյուղական բնակավայրերի հատակագծում եվ կառուցապատում

ՀՀՇՆ 31-01-2014 Բնակելի շենքեր. Մաս1 .Բազմաբնակարան Բնակելի Շենքեր

ՀՀՇՆ 21-01-2014 Շենքերի և Շինությունների Հրդեհային Անվտանգություն

ՀՀՇՆIV-11.03.03-02 Ավտոկայանատեղեր

Կառուցապատման վերաբերյալ ընդհանուր ցուցանիշները բերված են ստորև:

**բ. Կառույցի տեխնիկատնտեսական ցուցանիշները**

Հողամասի մակերեսը	12,926.0ք.մ.-100%
Կառուցապատման մակերեսը՝ /վերգետնյա շինության/ - Անջրաթափանց մակերևույթներ որից	5,772.0ք.մ.-44.6% 8,399.0ք.մ.-64.98%
- Կառուցապատում	5,772.0ք.մ.-44.6%
- Ասֆալտբետոնյա ճանապարհներ, Թեքահարթակներ, Մայթեր՝	2,627.0ք.մ.-20.38%
Կանաչապատ մակերեսներ	4.527.0ք.մ.-35.02%

Հողամասի ընդհանուր մակերեսը՝	12.926 ք.մ.
Ստորգետնյա հարկի մակերեսը արտաքին չափերով	5902.0 ք.մ.
Առաջին հարկի մակերեսը արտաքին չափերով	5772.0 ք.մ.
որից կամարանցում	201 ք.մ.
Երկրորդ հարկի մակերեսը արտաքին չափերով	5957.8 ք.մ.
Երրորդ հարկի մակերեսը արտաքին չափերով	6157.8 ք.մ.
Չորրորդ հարկի մակերեսը արտաքին չափերով	6157.8 ք.մ.
Հինգերորդ հարկի մակերեսը արտաքին չափերով	6157.8 ք.մ.
Վեցերորդ հարկի մակերեսը արտաքին չափերով	5881.9 ք.մ.
Կառույցի ընդհանուր մակերեսը՝	42051.6 ք.մ.
Ստորգետնյա ավտոկայանատեղի	152 հատ
Բնակարաններ	342 հատ

Բոլոր շինությունների շինարարական աշխատանքներն իրականացնվելու են միաժամանակ: Ըստ նշված բնութագրի ՄՆԻՊ 1.04.03-2008-ի նորմատիվներով հաշվարկված է 3 տարի 7 ամիս, կամ 43 ամիս շինարարության տևողություն, այդ թվում 3 ամիս նախապատրաստական փուլ:

Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը նախատեսվում է բարեկարգել և կանաչապատել: Ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի՝ կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին կազմում է առնվազն 35%:

Համաձայն կանաչապատման նախագծի՝ ընդհանուր կանաչապատման մակերեսը կազմում է 4527.0 հա, իսկ կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի

մակերեսին՝ 35% և ավելի: Մնացածը կկազմի կառուցապատումը, ներառյալ՝ սալվածքները, ճանապարհը և սպասարկման տարածքները: Կանաչապատման համար անհրաժեշտ կլինի նոր բուսահողի ձեռք բերում, որը կիրականացվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Գյումրիի քաղաքապետարանի հետ համաձայնեցված: Կանաչապատումը ներառում է՝ սիզամարգի ծաղիկների տեսքով աշխատանքներ և ծառատունկ:


Տեղանքի ուսումնասիրության արդյունքում, առաջարկվում է կիրառել ստորև նշված բույսերի տեսականին՝ համապատասխան քանակությամբ, միմյանցից համապատասխան հեռավորությամբ և տնկման սխեմայով: Բուսատեսակների ընտրությունը պայմանավորված է ոչ միայն վերջիններիս կենսաբանական հատկանիշները հաշվի առնելով, այլև գեղագիտորեն ներդաշնակ միջավայր ստանալու նկատառումներով:

Նշված աշխատանքներն իրականացվելու են Գյումրիի քաղաքապետարանի հետ համաձայնեցված, տարածքի համար մշակված կանաչապատման և բարեկարգման նախագծին համապատասխան: Դեկորատիվ տեսք ապահովելու նպատակով կանաչապատման համար օգտագործվելու Եղևնի, ակացիա, հացենի Գիհի և այլ ծառատեսակներ: Այս տեսակները հարմար են Շիրակի մարզի լանդշաֆտին և բնակլիմայական պայմաններին: Տվյալ լանդշաֆտում ծառերի կաչողականությունն ապահովվելու է պարտադիր ռոզման և խնամքի պայմաններում, որի իրականացման պատասխանատուն հանդիսանում է կառուցապատողը:

Կանաչապատվող տարածքների ռոզումը կապահովվի պահանջվող ջրաքանակին համապատասխան՝ ռոզման համակարգի ջրի ծախսով: Ռոզումն իրականացվելու է տարածքի համար նախագծվող ռոզման ցանցի միջոցով: Նախագծված ռոզման ցանցը, որը կունենա 200 մ երկարություն, կմիանա տարածքի հարևանությամբ անցնող ռոզման համակարգին՝ կնքվելիք պայմանագրին համաձայն:


Բնակելի համալիրի կանաչապատման համար նախատեսված 4.527.0քմ մակերեսում կպահանջվի տնկել 39 հատ ծառատեսակներ և 33 հատ թփեր, այդ թվում՝ վարդ, սամշիտ, որը կծառայի որպես տարածքի կենդանի ցանկապատ: Կառուցապատումից ազատ մակերեսում կստեղծվի սիզամարգ, սիզամարգի սալարկ և ծաղկանոց՝ ծաղկասածիլներով: Ամբողջ տարածքի համար կպահանջվի 50 կգ սիզամարգի սերմ:

Եղևնի	4 հատ
Արևելյան ծորենի	5 հատ
Ակացիա	6 հատ
Հուդայածառ	8 հատ
Գիհի կազակական	9 հատ
Հացենի	7 հատ
Մշտադալար սամշիտ	10 հատ
Գաճաճ վարդ	11 հատ
Զիակասկ սովորական	12 հատ:



Նկար 2. Տարածքի գլխավոր հատակագիծ





Նկար 3. Կանաչապատման հատակագիծ

**Կ. Նախապատրաստական աշխատանքներ**

Ներկայացվող գործունեության նախաշինարարական փուլում շինարարական աշխատանքները սկսելու համար նախատեսվում է կազմակերպել շինհրապարակ՝ ցանկապատով և այլ անհրաժեշտ ենթակառուցվածքներով:

Համաձայն գործող նորմերի, կիրականացվի ժամանակավոր ցանկապատում մետաղական թիթեղներով (2,5մx1,2մ)՝ ապահովելով առողջության և աշխատանքի անվտանգության պայմանները, ինչպես նաև կիրականացվեն շինարարական հրապարակի կազմակերպման աշխատանքներ, մասնավորապես՝

- շինհրապարակի լուսավորության ապահովման միջոցառումները,
- ժամանակավոր կառույցների տեղադրման աշխատանքները՝ ապահովելով շինարարական ճամբարում սանիտարահիգիենիկ, կենցաղային և հանգստի պայմանները (ընդմիջման և հանգստի հարմարություններ, խմելու և կենցաղային կարիքների ջուր, զուգարան, աշղեկի աշխատասենյակ և այլն)
- շինանյութերի ժամանակավոր պահեստավորման և թափոնների կուտակման ժամանակավոր վայրերը
- շինաշխատանքներում անհրաժեշտ հիմնական մեքենա-սարքավորումների կայանատեղիները:

Շինարարական աշխատանքները սկսվում են հետևյալ հերթականությամբ: Նախ կատարվում է տարածքի շինությունների ապամոնտաժում և տարածքում առակ ծառերի և թփերի կտրտում և հեռացում /համաձայնեցված Գյումրու քաղաքապետարանի հետ, գրությունը կցված է հայտում/: Հաստատվում ծառեր տարածքում չկան, հիմնականում միջին և փոքր տրամագծով ծառեր են, որոնց մի մասը չորացած են: Կկտրվեն ընդհանուր

թվով 15 հատ միջին ու փոքր տրամագծի ծառեր և թփեր: Այնուհետև տարածքն ամբողջությամբ մաքրվում է բույրոզերով, աղբը բարձվում է ինքնաթափեր ու տեղափոխվում, որից հետո կատարվում է հողային աշխատանքները:

Նախաշինարարական փուլում կիրականացվեն նաև կոմունիկացիաների վերատեղադրման և տեղափոխման աշխատանքները և վերջիններիս միացման աշխատանքները գոյություն ունեցող կոմունիկացիաներին:

Հաշվի առնելով տեղանքի սուղ պայմանները, անհրաժեշտ է կազմակերպել անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր մշակում՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով:

**d. Հողային աշխատանքներ**

Շինարարության ընթացքում մշակման ենթակա գրունտերը պատկանում են III-IV կարգի: Գրունտերի մշակումը փոստրակում և խրամուղիներում իրականացվում է “հետ-բահ” էքսկավատորով: Հողային աշխատանքների իրականացման ժամանակացույցը 6 ամիս է: Հողային աշխատանքների ժամանակ մշակվող գրունտի ծավալը կկազմի՝ 28000մ<sup>3</sup>, որից 3000 մ<sup>3</sup>-ը կօգտագործվի հետլիցքի համար: Ավելացած գրունտի՝ 25.000մ<sup>3</sup> ծավալն անմիջապես, առանց պահեստավորման Գյումրիի քաղաքապետարանի հետ համաձայնեցված կտեղափոխվի հատկացված թափոնավայր:

Քարե պարսպի քանդումից շինարարական աղբ և թափոններ չեն առաջանա, քանի որ քարերը օգտագործվելու են հետագայում նորից պարսպի վերակառուցման համար:

Բնահողի տեղափոխման համար ընտրված է ավտոինքնաթափ 7.5տ բեռնունակությամբ: Մաքրամշակումը իրականացվում է ձեռքով բանվորական ուժի օգնությամբ:

Հետլիցքի իրականացման համար կօգտագործվի գրունտի փափուկ բնահողերը:

Հիմքերի, հարթակների և հատակների հետլիցքը կիրականացվի բանվորական ուժի օգնությամբ, տեղափոխելով գրունտը սայլակներով մոտ 5-20մ:

Հետլիցքը նախատեսվում է խտացնել ձեռքի պնևմատոփիչներով:

**e. Աշխատանքների կատարման սխեմա**

Բնակելի համալիրը նախատեսված է կառուցել ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գ. Նժդեհ փողոց 9/10 հասցեում հատկացված հողամասում՝ բնակելի կառուցապատման գոտում: Համաձայն կառուցապատման նախագծի բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը նախագծվել է մեկ ստորգետնյա և հինգ մասամբ վեց վերգետնյա հարկերով: Համալիրը կազմված է տաս մասնաշենքից, որոնք իրարից անջատված են դեֆորմացիոն կարանով:

Համալիրի նկուղային հարկերը նախատեսված է ավտոկայանատեղի, իսկ առաջին հարկը նախատեսված են հասարակական սպասարկման և գրասենյակային տարածքների համար: Հատկացվող հողամասի մակերեսը կազմում է 12926.0 մ<sup>2</sup>, իսկ կառուցվող շինությունների զբաղեցված մակերեսը՝ 5772.0 մ<sup>2</sup>:

Նախագծի շինարարության կազմակերպումը մշակված է՝ ՀՀՇՆ 3. 01.01.2008-ի դրույթներով: Նորմատիվներով հաշվարկված է 3 տարի 7 ամիս, կամ 43 ամիս շինարարության տևողություն, այդ թվում 3 ամիս նախապատրաստական փուլ:

Նախագծի շինարարության կազմակերպումը մշակված է՝ ՀՀՇՆ 3. 01.01.2008-ի դրույթներով: Շին աշխատանքների իրականացման համար նախատեսում է 2 փուլ՝ նախապատրաստական և հիմնական: Նախապատրաստական փուլում կատարվում են հետևյալ աշխատանքները.

- Շին. հրապարակի ժամանակավոր ցանկապատում հետիոտն գլխածածկույթով

- Ժամանակավոր էլեկտրամատակարարում և ջրամատակարարում
- Շին. նյութերի և բետոնի ընդունման հարթակների պատրաստում
- Շին.հրապարակի գիշերային լուսավորվածություն

Տարածքը շինություններից ու ծառերից ազատելուց հետո կատարվում է հողային աշխատանքներ՝ հիմնականում ձեռքի մեխանիզմով: Փոստրակի քանդման աշխատանքներն ըստ բարձրության բաժանվում են փուլերի:

**Տարածքում գոյություն ունեցող քանդման աշխատանքերը կիրականացվեն ապամոնտաժման եղանակով,** այնպիսի հերթականությամբ, որ պահպանվեն անվտանգության տեխնիկայի կանոնները:

Կառուցապատվող տարածքում առկա քանդման ենթակա շենք-շինությունները /գազալցակայանի սպասարահ, կոմպրեսորային, մարտկոցային, արհեստանոց/ զբաղեցնում են 160քմ ընդհանուր մակերես: Շենք շինությունների քանդումից կառաջանա 480 խմ ծավալով շինարարական աղբ, որից 50մ<sup>3</sup>-ը հնարավոր կլինի օգտագործել շինարարական աշխատանքներում, իսկ մնացած՝ 430 մ<sup>3</sup> ծավալը որպես շին. աղբը կտեղափոխվի 5 կմ հեռավորության վրա գտնվող համայնքային աղբավայր:

Ապամոնտաժման եղանակով քանդվում են ծածկերի սալերը: Ձեռքի մեքենայացված և պարզ գործիքներով քանդվում են շարվածքները: Քանդման աշխատանքների համար որպես հիմնական ամբարձիչ մեխանիզմ առաջարկվում է հիդրավլիկ՝ հեռակոպիկ սլաքով մոբիլային KC-5473 Дешер կռունկը, KOMATSU PC 450LCD-7 բազմաֆունկցիոնալ էքսկավատորի կիրառումը, որն ունի տարբեր նշանակության ծայրային գործիքներ: Ապամոնտաժման աշխատանքների դեպքում կկիրառվեն պաշտպանիչ ցանցեր, որոնք մասնաշենքի ապամոնտաժման ընթացքում կապահովեն բանվորների և շին. անձնակազմի անվտանգությունը թափվող և ընկնող առարկաներից: Շինարարական աղբը հեռացվում է վերամբարձ մեխանիզմի կեռիկին ամրացված տարողությունների միջոցով:

Շենք-շինությունների քանդման (ապամոնտաժման) աշխատանքների իրականացումը կկազմակերպվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ խստագույնս պահպանելով անվտանգության ՇՆևԿ III-4-80\* «Անվտանգության տեխնիկան շինարարությունում» կանոնները:

Քանդման արդյունքում հավաքված շինաղբը և ապամոնտաժված շինարարական թափոնները գնահատվում է երկրորդային օգտագործման համար հիմնականում ոչ պիտանի և ինքնաթափերի միջոցով անմիջապես կտեղափոխվեն Գյումրու քաղաքապետարանի կողմից հատկացված համայնքային աղբավայրեր: Քանդման ժամանակ փոշին նստեցնելու համար իրականացվում է ջրցան: Այնուհետև մաքրվում է քարերի արանքները շաղախից, հետո մեկ-մեկ հանվում են քարերը, որոնք գտնվում են և տեղադրվում առանձին տեղեր, նորից օգտագործման, կամ որպես ջարդոն օգտագործելու համար:

Փոստրակում գրունտի քանդման ժամանակ, որպեսզի փլուզումներ չլինեն, յուրաքանչյուր 10 մ երկարությամբ քանդելուց հետո, փոստրակի ամբողջ բարձրությամբ ամրացվում է մետաղացանց: Միաժամանակ աշխատում են երկու էքսկավատոր՝ փոստրակի տարբեր ծայրերում: Աշխատանքները պետք է կազմակերպվեն այնպես, որ էքսկավատորներն աշխատելիս իրար չխանգարեն: Փոստրակում քանդման աշխատանքներն ավարտելուց հետո բուլդոզերը կատարում է փոստրակի հարթեցում, մնում է միայն փոստրակ մտնող թեք ճանապարհի վերևի հատվածը մեքենաների և շինմեխանիզմի աշխատանքների համար: Որից հետո իրականացվում է ավտոկայանատեղի հատակի աշխատանքները:

Ավտոկայանատեղի հիմնային սալի իրականացման աշխատանքներին զուգահեռ պատրաստվում է նաև բետոնե հիմնատակ աշտարակային կռունկի համար: QTZ 125 մակնիշի աշտարակային կռունկի բարձրությունը 47.5-163մ է, սլաքի թռիչքը - 60մ և

բեռնունակությունը՝ 8.0-1.5տ: QTZ 125 մակնիշի աշտարակային թիվ 1 կռունկը տեղադրվում է հատակագծում նշված տեղում: Երկու աշտարակային կռունկներն աշխատելու են միաժամանակ, ուստի պետք է կատարել աշխատանքների ճիշտ կազմակերպում, որ երկու կռունկների սլաքներն իրար չխանգարեն և չստեղծվի վթարային պահեր:

Բեռի ուղղահայաց և հորիզանական տեղափոխությունները պետք է կատարվեն ազդարարի ազդանշանին համապատասխան, պահպանելով անվտանգության գոտու սահմանները, ինչպես նաև բեռի անկման հորիզոնական տեղափոխությունը /նախագծով այն համարվում է 10մ, նշահարելով դեղին գույնով, ապահովել դիսպետչերական կամ մեկ աշտարակային կռունկի գործողության գոտում բացառել կից շենքի աշտարակային կռունկի գործողությունը տվյալ գոտում/: Անմիջապես հիմքերի տակ բնահողը մշակվում է ձեռքով, ձեռքի պարզագույն գործիքներով՝ փոքր մեխանիզմներով:

Կռունկով բեռի տեղափոխումը բացառիկ դեպքերում գոյություն ունեցող շենքերի տանիքի վրայով կատարվում է շինարարության ղեկավարի գրավոր կարգադրությամբ, ապահովվելով բեռի անվտանգ տեղափոխումը, անվտանգության ճարտարագետի մշտական ներկայությունը:

Աշտարակային կռունկի մոնտաժումը ե/բետոնե ծածկի սալի վրա կատարվում է նախագծի կոնստրուկտորի հիմնավորված լոկալ հաշվարկով: Աշտարակային կռունկի մոնտաժման աշխատանքները իրականացվում է համապատասխան արտոնագիր ունեցող կազմակերպության կողմից ըստ կռունկի անձնագրային տվյալների:

Աշտարակային կռունկների ապամենտաժումից հետո ավտոկռունկի, ճախարակների միջոցով ավարտին է հասցվում ավտոկայանատեղիի մնացած հատվածների կառուցումը: Վերջում վերականգնվում է քանդված քարե ցանկապատը:

Արտաքին երեսապատման աշխատանքների համար շենքերի ամբողջ բարձրությամբ և պարագծով պատրաստվում են տախտակամածեր, որոնց վրա ամրացվում են երկայնական մետաղաձողեր բարձրության վրա աշխատողների ամրագոտիների համար: Անհրաժեշտության դեպքում կարելի է օգտվել ավտովերահանից, կարելի է օգտագործել նաև ճախարակ կամ շինարարական օրորոց:

Բանվորների համար տեղադրվում են վագոն-տնակներ, իսկ քանի որ մասնաշենքերի կառուցման համար աշխատողների թիվն ավելանում է, ուստի վագոն-տնակների թիվը կրկնապատվում է:

Հիմքերը տեղադրելուց առաջ հիմնատակը պետք է ընդունվի երկրաբանի կողմից հաստատված ակտով (բաց փոսորակի ընդունման ակտ):

Աշխատանքների ավարտից հետո կատարվում է բարեկարգման և ասֆալտապատման աշխատանքներ:

Շինարարության համար պահանջվող ջուրը վերցվում է տարածքին համեմատաբար ավելի մոտ անցնող ջրատարից, որի վրա համապատասխան մասում ամրացվում է եռաբաշխիչ և հաշվիչ, իսկ ժամանակավոր էլեկտրոէներգիայի մատակարարումը կատարվում է նույնպես տարածքի մոտակայքում գտնվող ենթակայանից՝ տեղադրելով առանձին հաշվիչ:

Շինհրապարակում անհրաժեշտ է կազմակերպել անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր մշակում՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով:

Ապրանքային բետոնը շին.հրապարակ է բերվում պատրաստի վիճակում՝ բետոնատար ինքնաթափերի միջոցով ավտոմատ բետոնա-շաղախային հանգույցից: Ամրանային իրերը պատրաստվում են հատուկ պոլիգոններում, մասամբ շին. հրապարակում:

Շինարարական հրապարակում չի նախատեսվում շինանյութերի, կամ սորուն նյութերի պահեստներ:

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով շին. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները:

Շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել «Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի» կողմից հաստատված դրույթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Շինարարության ընթացքում այլ անձանց իրավունքների սահմանափակումը հետևում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ամբողջ շինարարության ընթացքում կատարել միջոցառումներ շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ: Թույլ չտալ նորմայից ավել մթնոլորտային վնասակար արտանետումներ: Շին. մեքենաները շին. հրապարակ պետք է մտնեն և դուրս գան մաքուր վիճակով: Բնահողով բարձված մեքենաների թափքը պետք է թրջել և ծածկել պոլիէթիլենային թաղանթներով, թույլ չտալով փոշու ամպի գոյացություններ: Երեկոյան ժամերին դադարեցմել աղմկոտ աշխատանքների կատարումը:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառվել են Հայտի հաջորդ բաժիններում՝ բնապահպանական միջոցառումների ծրագրում և բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում:

**f. Շինարարական աշխատանքների բնութագրերը և տիպերը**

Բնակելի համալիրի կառուցման շինարարական աշխատանքները ներառում են.

- Նախապատրաստական փուլի աշխատանքներ
- Հողային աշխատանքներ
- Միաձույլ ե/բ կոնստրուկցիաներ
- Պատեր և միջնապատեր
- Տանիքային աշխատանքներ
- Ներքին ինժեներական ցանցեր
- Հարդարման աշխատանքներ
- Երեսպատման աշխատանքներ
- Տարածքի բարեկարգման աշխատանքներ, որոնք ներառում են բետոնյա

սալվածքներ և ասֆալտապատ հարթակներ:

**g. Շինարարության կազմակերպում**

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրն ու շինարարության ընդհանուր ծավալը: Շինարարության տևողությունը կազմում է 3 տարի 7 ամիս, կամ 43 ամիս շինարարության թույլտվության տրամադրման օրվանից, որից 3 ամիս նախապատրաստական փուլ:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունն իրականացվելու է ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, վաճակալել դրանք այլ կազմակերպություններից:

Շինարարության ընթացքում բանվորները կսնվեն հատուկ ճաշարան-տնակում:


Շինարարական աշխատանքներում աշխատողների ընդհանուր թիվը կկազմի 90 մարդ, որից

- բանվորներ - 80 մարդ
- ինժեներներ - 5 մարդ
- ծառայողներ - 3 մարդ
- այլ աշխատողներ - 2 մարդ:

Շինարարության նախապատրաստական փուլում իրականացվելու են հետևյալ աշխատանքները.

- Ժամանակավոր ցանկապատի տեղադրում,
- Կոմունիկացիաների վերատեղադրում և տեղափոխում (ըստ անհրաժեշտության),
- Ժամանակավոր շինությունների տեղադրում,
- Միացում գոյություն ունեցող կոմունիկացիաներին:

Ստորև բերված է շինհրապարակի սխեման



Նկար 4. Կառույցների տեղադիրքը

**հ. Շինարարական կոնստրուկցիաների մոնտաժ**

Քարերի, մետաղական կոնստրուկցիաների և այլ նյութերի մատուցումը տեղադրման հարթակ իրականացվում է 32տ բեռնատարողություն ունեցող ավտոամբարձիչի օգնությամբ, որի տեխնիկական պայմանները թույլ են տալիս (առավելագույն 3տ բեռնունակությամբ սլաքի շառավիղը 15մ մասնաշենքի) նոր շինարարության աշխատանքների իրականացումը:

Ամբարձիչի մեքենավարը կարող է դադարեցնել աշխատանքը, եթե կիսատնաբերվեն ամբարձիչի կոնստրուկցիայի ճաքեր և դեֆորմացիաներ, ճոպանի կտրվածք, արգելակման խախտումներ և այլն:

Բեռնման և բեռնաթափման համար նախատեսված տարածքը պետք է հարթեցվի և ունենա թեքություն ոչ ավել քան 5°:

Բեռնաբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը, որոնք օգտագործվում են բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ, պետք է համապատասխանեն պետական ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին:

**ԲՆԱԿԵԼԻ ՀԱՄԱԼԻՐԻ ԸՆԿՈՆՏՐԱԿՏԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ (սկիզբ)**

Հ/Հ	ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՎԱՆՈՒՄ	Ժ Ա Մ Կ Ե Տ Ը 3 տ արի 7 ամիս (43 ամիս)																	
		ԱՄԻՍՆԵՐԸ																	
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
1	Ժամանակավոր ցանկապատի, դարպասների և դռնակի տեղադրում																		
2	Ժամանակավոր լուսավորության, ջրամատակարարման և վազոն-տնակների տեղադրում																		
3	Գոյություն ունեցող շինությունների բանդում և ծառերի ու թփերի կտրում, բարձում էրկավատորենով ինքնաթափերն ու տեղափոխում																		
4	Տարածքի հարթեցում բուլդոզերով																		
5	Դ, Գ1, Գ2, Բ2 մասնաշենքերի և Բ1 մասնաշենքի 18-15 առնցքներով պարիսպված տարածքում փոտրակի բանդում 1.65-1.85 խմ շերտի տարողությամբ էրկավատորենով մինչև 1549.50 միչք, տեղադրել մետաղական վահանակներ և բանդած գրունտի բարձում ինքնաթափերն ու տեղափոխում 12 կմ																		
6	Լույս փոտրակի բանդում 1.65-1.85 խմ շերտի տարողությամբ էրկավատորենով մինչև 1546.50 միչք, կտրատվում էլիքից համար, նոյնպես տեղադրելով մետաղական վահանակներ																		
7	Դ, Գ1, Գ2, մասնաշենքերի և Բ1 մասնաշենքի 18-15 առնցքներով պարիսպված տարածքի հարթեցում բուլդոզերով																		
8	Դ, Գ1, Գ2, մասնաշենքերի և Բ1 մասնաշենքի 18-15 առնցքներով պարիսպված տարածքում կետային խամբաբեռտուն հիմքերի համար կտրապարիսպների պատրաստում																		
9	Դ, Գ1, Գ2, մասնաշենքերի և Բ1 մասնաշենքի 18-15 առնցքներով պարիսպված տարածքում կետային խամբաբեռտուն հիմքերի իրականացում																		
10	Բ2 մասնաշենքի տարածքում փոտրակի բանդում 1.65-1.85 խմ շերտի տարողությամբ և ջարդիչ զննվող էրկավատորենով մինչև 1542.60 միչք, Բ1 տարածքում մինչև 1545.70 միչք տեղադրելով մետաղական վահանակներ և բանդած գրունտի բարձում ինքնաթափերն ու տեղափոխում 12 կմ																		
11	Ա մասնաշենքի տարածքում փոտրակի բանդում 1.65-1.85 խմ շերտի տարողությամբ էրկավատորենով 1545.20 միչք, տեղադրել մետաղական վահանակներ և բանդած գրունտի բարձում ինքնաթափերն ու տեղափոխում 12 կմ																		
12	Փոտրակների հարթեցում բուլդոզերով և տոփանում																		
13	Դ, Գ1, Գ2, մասնաշենքերի և Բ1 մասնաշենքի 18-15 առնցքներով պարիսպված տարածքում կետային խամբաբեռտուն հիմքերի վրա իրականացնել բեռտնե հարթաշերտի և պահանգների աշխատանքներ																		
14	Դ, Գ1, Գ2, մասնաշենքերի և Բ1 մասնաշենքի 18-15 առնցքներով պարիսպված տարածքում միաձույլ երկ սյուների, հեծանների, ծածկի սպերի և արտաքին պատերի իրականացում մինչև 0.00 միչք																		
15	Դ, Գ1, Գ2, մասնաշենքերի և Բ1 մասնաշենքի 18-15 առնցքներով պարիսպված տարածքում պատերի իրականացումից հետո պատերի մեկուսացում, մետաղական վահանակների ապամոնտաժում և ելիքից բուլդոզերով ու ձեռքով յուրաքանչյուր 50 սմ լիցքից հետոտու բաց ու չոր տոփանում																		
16	Բ1 մասնաշենքի 15-7 առնցքներով պարիսպված, Բ2 և Ա մասնաշենքերի տարածքում կետային խամբաբեռտուն հիմքերի համար կտրապարիսպների պատրաստում																		
17	Բ1 մասնաշենքի 15-7 առնցքներով պարիսպված, Բ2 և Ա մասնաշենքերի տարածքում կետային խամբաբեռտուն հիմքերի իրականացում																		
18	Ուղեքի տեղադրում, հողանցում երկու աշտարակային կոնկրետի համար և աշտարակային կոնկրետի տեղադրում																		
19	Դ, Գ1, Գ2, մասնաշենքերի շինմոնտաժային աշխատանքների իրականացում 0.00 միչք վեր միաձույլ երկ սյուների, հեծանների, միջուրակային ծածկերի իրականացում աշտարակային կոնկրետով																		
20	Բ1 մասնաշենքի 15-7 առնցքներով պարիսպված, Բ2 և Ա մասնաշենքերի տարածքում կետային խամբաբեռտուն հիմքերի վրա իրականացնել բեռտնե հարթաշերտի և պահանգների աշխատանքներ																		
21	Բ1 մասնաշենքի 15-7 առնցքներով պարիսպված, Բ2 և Ա մասնաշենքերի տարածքում միաձույլ երկ սյուների, հեծանների, ծածկի սպերի և արտաքին պատերի իրականացում մինչև 0.00 միչք																		
22	Բ1 մասնաշենքի 15-7 առնցքներով պարիսպված, Բ2 և Ա մասնաշենքերի տարածքում պատերի իրականացումից հետո պատերի մեկուսացում, մետաղական վահանակների ապամոնտաժում և ելիքից բուլդոզերով ու ձեռքով յուրաքանչյուր 50 սմ լիցքից հետոտու բաց ու չոր տոփանում																		

**Հիմնական մեքենաների և մեխանիզմների քանակ**

**Люлька строительная**



**i. Ջրամատակարարում և ջրահեռացում**

*Ջրապահանջը*

Ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացներն իրականացվում են գործող շինարարական նորմերի ու կանոնների և տեխնիկական պայմանների համաձայն:

Քաղաք Գյումրի գ. Նժդեհ փողոց 9/10 հասցեում բնակելի համալիրի կառուցման աշխատանքային նախագծի «Ջրամատակարարում և կոյուղի» բաժինն իր մեջ ներառում է՝

- Արտաքին և ներքին ջրամատակարարում
- Տարածքի ռոտզում
- Արտաքին և ներքին կոյուղի
- Անձրևաջրերի հեռացման հեղեղատար կոյուղի:

Ջրամիացումը և ջրահեռացումն իրականացվելու է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից՝ տրվող Ջրամիացման և ջրահեռացման նախագծման տեխնիկական պայմաններին համապատասխան՝ ջրամիացման, հի հիդրանտի տեղադրման, կողուղագծի շրջանցման, հեղեղատների միացման, գոյություն ունեցող կոյուղագծին միացման նախագծային լուծումներին համաձայն:

Համաձայն տեխնիկական պայմանների ելակետային տվյալների ջրամիացումն իրականացվում է նախագծված տարածքի անմիջապես հարևանությամբ գ. Նժդեհ փողոցով անցնող, 110 մմ տրամագծի գործող ջրագծից: Ջրագծի ջրի ճնշումը 2.5մթն., ջրամատակարարումը շուրջօրյա է: Ջրահեռացման միացման կետը տարածքի հարևանությամբ, գ. Նժդեհ փողոց գործող կոյուղագիծն է: Կոյուղու միացումն իրականացվելու է 500 մմ տրամագծի կոյուղու կոլեկտորին միացումով: Նշված աշխատանքները կիրականացվեն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից տրամադրված տեխնիկական պայմանի և համաձայնեցված նախագծի համաձայն:

Ջրաչափական հանգույցի և հի հիդրանտի տեղադրման կետերում կառուցվելու է դիտահորեր:

Ջրատարում վթարների և վերանորոգումների ժամանակ ջրամատակարարման անընդհատությունը ապահովելու, ինչպես նաև ներքին հակահրդեհային ջրաքանակ ապահովելու համար նախատեսվում է պահուստային բաքի տեղադրում, որը միաժամանակ կարգավորող դեր կատարում է:

Հաշվի առնելով որ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն կարող է ապահովել 20մ ջրի ճնշում, շենքին կից նախատեսված է պոմպակայան, որտեղ տեղադրվելու են բարձր ՕԳԳ ունեցող պոմպեր:

***Ներքին տաք, սառը ջրամատակարարում***

Բնակելի համալիրի ներքին ջրամատակարարման ցանցերը նախատեսվում է իրականացնել պոլիպրոպիլենե Մ50-15մմ խողովակներով:

Ջրամատակարարումը նախատեսվում է 2 համարժեք՝ Մ50մմ պոլիպրոպիլենե խողովակներից մուտքագծերով, որոնք իրար են միանում սեյսմիկ կարերի երկու կողմերում տեղադրված փականներով: Նախագծով նախատեսվում է կենցաղային խմելու և հրդեհաշիջման միասնական համակարգ: Սառը ջրի համակարգից նաև սնում է տրվում օդորակման և օդափոխության սարքավորումներին: Սանիտարական բոլոր սարքերը տաք և սառը ջրամատակարարման համակարգից անջատելու համար տեղադրվում են համապատասխան փականներ:

Նախատեսվում է հակահրդեհային հիդրանտ արտաքին հրդեհաշիջման համար: Ներքին հրդեհաշիջման համար հարկերում՝ հակահրդեհային կանգնակների վրա,



համապատասխան խորշերում տեղադրվում են հակահրդեհային արկղեր, որոնցից յուրաքանչյուրի մեջ կանգնակի վրա տեղադրում է փական հակահրդեհային ծորակով, ռետինե խողովակ, հրշեջ փող և 2 ձեռքի կրակամարիչներ: Հակակրդեհային ծորակները տեղադրվում են ելնելով յուրաքանչյուր կետում 1 ջրի շիթ ապահովելու պայմանից:

***Ներքին և արտաքին ջրահեռացում՝ կոյուղի***

Շենքերի կոյուղաջրերը հեռացվում են միասնական ինքնահոս համակարգով: Կոյուղաջրերը հեռացվում են կանգնակների միջոցով: Սանիտարական սարքերի միացումը կանգնակներին նախատեսվում է իրականացնել թեք ձևավոր մասերով: Կանգնակները մոնտաժվում են հորաններում և պատերի մեջ փակ համակարգով:

Կոյուղու ելքագծերի հորիզոնական հատվածների համապատասխան հեռավորությունների վրա նախատեսվում են մաքրիչներ: Կոյուղագծերի և ելքագծերի հորիզոնական հատվածներն ունեն համապատասխան թեքություններ համապատասխանաբար դեպի կանգնակներ և դիտահորերը:

Շենքից կոյուղաջրերը լցվում են կոյուղու երկաթբետոնե դիտահորերի մեջ, որից հետո արտաքին ցանցով միացվում է տարածքում գործող կոյուղագծի դիտահորին՝ համաձայն տեխնիկական պայմանի:

Արտաքին կոյուղագիծը նախատեսվում է իրականացնել պոլիթիլենե Մ150-200մմ խողովակներով: Կոյուղագծի հանգուցային կետերում և անկյունների վրա նախատեսվում են դիտահորեր:

***յ. Ջեռուցում և գազամատակարարում***

Գազամատակարարումը իրականացվում է քաղաքային ցանցից՝ տեղադրելով գազամատակարարման բաշխիչ-վահանակ: <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ կողմից տրվել է տեխնիկական պայմաններ բնակելի շենքի գազամատակարարման համար: Գազաֆիկացման համար միացման կետ կհանդիսանա Պռոշյան փողոցով անցնող 219 մմ տրամագծի ստորգետնյա միջին ճնշման գազատարը:

Բոլոր մասնաշենքերի գազամատակարարման խողովակներն անցնում են ստորգետնյա հատվածով, շենքի մոտ բարձրանալով մտնում են սանդղավանդակին կից պատշգամբ, որտեղ ամեն հարկում տեղադրված են գազի հաշվիչները բնակարանների համար:

Բնակելի համալիրի ջեռուցումը և տաք ջրամատակարարումը բնակարաններում և տարածքներում իրականացվում է անհատական կաթսաների միջոցով: Գազամատակարարումը իրականացվում է քաղաքային ցանցից՝ տեղադրելով գազամատակարարման բաշխիչ-վահանակ:

Բոլոր մասնաշենքերի գազամատակարարման խողովակներն անցնում են ստորգետնյա հատվածով, շենքի մոտ բարձրանալով մտնում են սանդղավանդակին կից պատշգամբ, որտեղ ամեն հարկում տեղադրված են գազի հաշվիչները բնակարանների համար:

***կ. Անձրևաջրերի հեռացում /հեղեղատար կոյուղի/***

Տարածքի մակերևութային ջրերի հեռացումը կատարվում է կազմակերպված եղանակով, հեղեղատար կոյուղու համակարգի միջոցով: Տարածքի ցածրադիր տեղերում տեղատրվում են անձրևընդունիչ հորեր, որտեղից անձրևաջրերը հեռացվելով տարածքից

տեխնիկական պայմանի համաձայն միացվում է տարածքի հարևանությամբ անցնող, գործող քաղաքային՝ Մ 500 մմ հեղեղատար ցանցին:

Նույն ցանցով է հեռացվում նաև շենքի տանիքներից հավաքվող անձրևաջրերը և օդափոխության, օդորակման սարքավորումներից առաջացած կոնդենսատները: Ցանցը նախատեսվում է իրականացնել պոլիէթիլենե Մ 200-300մմ խողովակներով:

**1. Կանաչապատ տարածքների ոռոգում**

Կանաչապատ գոտիների ոռոգումը կիրականացվի ոռոգման ներքին ցանցի միջոցով, որը նախագծվում է  $\Phi=20-40$ մմ տրամագծով պոլիէթիլենային խողովակներից,  $\Phi=15$  մմ ցողացիրներից,  $\Phi=20$ մմ ոռոգման վինտիլներից և  $\Phi=20-40$ մմ արկղով փականներից: Ոռոգման խողովակաշարը կմոնտաժվի 20 սմ խորությամբ, իսկ ոռոգման ջուրը կվերցրվի տարածքով անցնող ոռոգման ջրագծից: Ոռոգման ցանցի նախագիծը նույնպես ներառված է «Կանաչապատ գոտիների բարեկարգման նախագիծ»-ում:

**մ. Նյութերի և բնառեսուրսների օգտագործում**

Բնակելի համալիրի կառուցման շինարարության ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ շինհրապարակների տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար: Ջրամատակարարումն իրականացվելու է տեխնիկական պայմանների համաձայն՝ գոյություն ունեցող ջրատարից, որը կմիացվի քաղաքային ջրամատակարարման ցանցին: Իսկ կոյուղին կմիացվի քաղաքային կոյուղատարին: Հակահրդեհային նպատակներով ջրի պահանջարկը 10լ/վրկ:

Էլեկտրաէներգիայի պահանջարկը շինարարության փուլում կապահովվի ժամանակավոր տրանսֆորմատորային ենթակայանից:

Շինարարական աշխատանքներից ժամանակ հողային աշխատանքներից բուսահող չի առաջանա և վերջինիս պահեստավորման և պահպանման միջոցառումների անհրաժեշտություն չկա: Քանի որ տարածքը ներկայացված է հողախառն լիցքային գրունտներով, հողի բերրի շերտի պահպանում չի նախատեսվում: Բնակելի համալիրի կառուցապատման աշխատանքների ավարտից հետո անհրաժեշտ կլինի բուսահող կանաչապատման աշխատանքներն իրականացնելու համար:

Աղյուսակում ներկայացված են շինարարության ժամանակ անհրաժեշտ ռեսուրսների պահանջարկը՝ հիմնված աշխատանքների ծավալների և կատարման ժամկետների վրա:

*Աղյուսակ 2.*

NN	Անվանում	Չափման միավոր.	Պահանջարկ
1	Էլեկտրաէներգիա	Phաշվ,ԿՎտ	939 կվԱ
2	Ջուր	մ <sup>3</sup> /օր	6.76
3	Խտացված օդ	հատ	1 Կոմպրեսոր
4	Հակահրդեհային նպատակներով ջրի պահանջարկը	լ/վրկ	10.0

Հողային աշխատանքներից առաջացող մնացորդային լիցքային գրունտները և շինարարական աշխատանքներից գոյացող շինադբը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված

կարգով Գյումրիի քաղաքապետարանի հետ համաձայնեցված կտեղափոխվեն աղբավայր, կամ կրկնակի կօգտագործվեն:

**2.1. Շինարարության փուլում ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն**

Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման և որոշ շինաշխատանքների կազմակերպման նպատակով, ինչպես նաև աշխատակազմի խմելու և կենցաղային կարիքները հոգալու համար: Շինարարական աշխատանքներում և բանավորական կազմի խմելու-կենցաղային նպատակների համար անհրաժեշտ ջուրը կվերցրվի տարածքին կից անցնող համայնքային ջրագծից:

Աշխատողների խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը հաշվարկվում է հետևյալ բանաձևով`

$$W = (n \times N + n1 \times N1) \times T$$

որտեղ` n - տեխնիկական աշխատողների և ծառայողների թիվն է -10

N - ջրածախսի նորման` - 0.016մ<sup>3</sup>,

n1 - բանվորների թիվն է - 80,

N1 - ջրածախսի նորման բանվորների համար` - 0.025մ<sup>3</sup>/մարդ օր,

T - աշխատանքային օրերի առավելագույն թիվն է -1056 օր:

Այսպիսով`  $W = (10 \times 0.016 + 80 \times 0.025) \times 1056 = 2280.9$  մ<sup>3</sup>/շին ժամանակահատված, միջին օրեկան 2.16 մ<sup>3</sup>:

Կենցաղային կեղտաջրերը`  $2280.9 \times 0.95 = 2166.8$  մ<sup>3</sup>, միջին օրեկան` 2.052 մ<sup>3</sup>:

Կենցաղային կեղտաջրերը կմիանան համայնքային կոյուղատարին:

Շինարարական աշխատանքների ընթացքում շինհրապարակում առաջացած հնարավոր փոշու մակարդակները կնվազեցվեն ջրցանի իրականացմամբ:

Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսի հաշվարկը բերվում է ստորև.

$$V = S \times K \times T$$

որտեղ`

S – ջրցանվող շինարարական տարածքի մակերեսն է` 3120.0 ք. մ

K – 1 մ<sup>2</sup> օրական ջրցանի նորմատիվն է` 0.0015 մ<sup>3</sup>,

T – ամբողջ շինարարության ժամանակահատվածն է (օրերով)` 22 օր x 43 ամիս=946

օր

$$V = 3120 \times 0.0015 \times 1056 = 4427$$
 մ<sup>3</sup>/շինարարություն ժամանակ

Շին աշխատանքների ընթացքում ջրցանի համար անհրաժեշտ ջրի քանակը կկազմի 4427 մ<sup>3</sup>:

Շինարարական աշխատանքների ընթացքում հոսքաջրերի առաջացում չի կանխատեսվում, բացի այդ աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր արտահոսքերը և արտանետումները տարածքից: Այլ անուղղակի ազդեցություններ ջրային համակարգերի վրա չեն կանխատեսվում, քանի որ շինարարական մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի համապատասխան չափաքանակներով և ծածկող պաստառների առկայությամբ` բացառելով շին-մեքենաների երթևեկության ընթացքում հնարավոր արտանետումները:

Հնարավոր կեղտաջրերի առաջացման դեպքում հրապարակում կպահվի կեղտաջրերի հեռացման համար նախատեսված տարա, որտեղ կեղտաջրերի (բետոնաջրեր և այլն) հետերոզեն զանգվածի նստեցումից հետո, վերջիններս հնարավոր կլինի շին աղբի

հետ հեռացնել աղբավայր, իսկ դեկանտված ջուրը՝ հնարավոր կլինի օգտագործել ջրցանման նպատակով կամ շինարարական այլ աշխատանքներում:

**3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ**

**3.1. Տարածքի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները**

Նախատեսվող գործունեության վայրը գտնվում է Շիրակի մարզի Գյումրի քաղաքում Գարեգին Նժդեհ 9/10 հասցեում գտնվող հողամասում: Տարածքի ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են 1533,0-1551,0 մետրերի սահմաններում:

Գյումրի քաղաքը տեղակայված է Հայաստանի հյուսիս-արևմտյան հատվածում, Շիրակի բարձրավանդակի կենտրոնական մասում, Ախուրյան գետի ձախ ափի ծովի մակարդակից 1475-1605 մ նիշերի վրա: Քաղաքն ունի աշխարհագրական հարմար դիրք, որը սկսվում է Չերքեզի, Ջաջուռի և այլ ձորերով: Ռելիեֆը հարթավայրային է, ծածկված լճագետային և հրաբխային՝ շուրջ 350 մ խորության նստվածքներով: Տարածաշրջանի ռելիեֆ բաժանվում է երկու մասի: Հրաբխային, որն ընդգրկում է Ջավախք-Աշոցքի տարածաշրջանը, իր մեջ ընդգրկելով Ջավախքի և Եղնախաղի լեռնավահանները, Չլդրի լեռները և Աշոցքի սարահարթը, մյուս մասն իր մեջ ներառում է Շիրակի ծալքաբեկորավոր լեռնաշղթան ու Շիրակի դաշտը:

Շիրակի մարզի կենտրոնական և հարավային հատվածում տարածվում է Շիրակի դաշտը, իսկ հյուսիսային շրջանում՝ Աշոցքի սարահարթը, միաժամանակ Շիրակի մարզում են տարածվում Փամբակի, Բազումի լեռնաշղթաների, Եղնախաղի, Ջավախքի, Արագածի լեռնազանգվածների մի մասը: Նախատեսվող գործունեության տարածաշրջանին մոտ գտնվում են Փամբակի և Շիրակի լեռնաշղթաները: Մակերևույթն անտառազուրկ է, բնորոշ են հրաբխային կոներն ու լավային հոսքերը

Գեոմորֆոլոգիական տեսակետից կառուցապատվող տարածքը տեղադրված է երոզիոնահողմնահարման լանջերի և հարավային սարավանդի սահմաններում, որտեղ ռելիեֆը մանր բլրային է, առանձին դեպքերում հարթ, աննշան թեքությամբ դեպի հյուսիս-արևելք: Շրջանի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են չորրորդականի հասակի հրաբխային տուֆերը, բազալտները, անդեզիտաբազալտները և դացիտային լավաները, ծածկված ժամանակակից ալյուվիալ, էլյուվիալ-դեյուվիալ, դեյուվիալ- պրոյուվիալ և էլյուվիալ առաջացումներով՝ ավազային, կավային և խոշորաբեկորային գրունտներով:

**3.2. Կլիման**

Շիրակի մարզը հանդիսանում է Հայաստանի ամենացրտաշունչ տարածաշրջանը: Կլիմայի ձևավորման հիմնական գործոններից են հյուսիսային և հյուսիս-արևմտյան օդային հոսանքները, որոնք նպաստում են ցուրտ եղանակի ձևավորմանը:

Ուսումնասիրվող տարածքի կլիմայական պայմանները բնութագրելիս վկայակոչվել է ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը և ներկայացվել է Գյումրի քաղաքի համապատասխան կլիմայական ցուցանիշները: Բնութագրվող տարածքը գտնվում է «Ցուրտ» կլիմայական շրջանում: Բնորոշ է ցամաքային կլիման: Բացարձակ նվազագույն ջերմասիճանը կազմում է -36°C, բացարձակ առավելագույն ջերմասիճանը՝ 38°C: Քամու միջին տարեկան արագությունը կազմում է 1.3 մ/վրկ: Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը կազմում է 498 մմ: Չյան ծածկույթը ձևավորվում է նոյեմբեր ամսին, ձյան ծածկույթով օրերի թիվը կազմում է մոտ 94 օր, իսկ ծածկույթի առավելագույն

բարձրությունը՝ 61 սմ: Գրունտի սառչման առավելագույն խորությունը 142 սմ է, ցուրտ սեզոնին գերակշռող են համարվում հյուսիսայան քամիները (ՀՀՇՆ II-7.01-2011):

Հուլիսի միջին ամսական ջերմաստիճանը 19,5°C, միջին տարեկան հարաբերական խոնավությունը 72% (ժ.15-ին), լեռնահովտային քամիները 2-3 մ/վրկ արագությամբ և ցուրտ անհողմային ձմեռը՝ հունվարի միջին ամսական ջերմաստիճանը -9,0°C է, հարաբերական խոնավությունը 83% (ժ.15-ին), գերակշռող քամիների ուղղությունը հյուսիսային: Ձմռանը առկա են միջին արագություններից ամենաթույլ քամիներ 0,6մ/վրկ արագությամբ, իսկ ամռանը՝ 2 մ/վրկ:

Ստորև աղյուսակի տեսքով բերվում է մի քանի կլիմայական տվյալներ՝ ըստ Գյումրիի օդերևութաբանական կայանի դիտարկումների:

Օդի ջերմաստիճանը, °C

Բնակավայրի անվանումը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի միջին ամսական, ըստ ամիսների °C												Միջին տարեկան	Բացարձակ	Բացարձակ
		I	II	III	IV	V	VI	VII	VII I	IX	X	XI	XII			
Գյումրի	1528	-9.0	-7.2	-1.2	6.7	11.7	15.5	19.5	19.5	15.2	8.5	1.7	-5.1	6.3	-36	38

Օդի հարաբերական խոնավությունը (%)


Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը. %													Միջին տարեկան	միջինը ժամը 15-ին	
	ըստ ամիսների												ամենացուրտ ամսվա		Ամենաշոգ ամսվա	
	I	II	III	IV	V	VI	VII	VII I	IX	X	XI	XII				
Գյումրի	83	82	76	68	69	66	62	60	63	70	75	84	72	71	39	

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական մմ օրական առավելագույնը												Ձյան ծածկույթը			
	ըստ ամիսների												տարեկան	տասնօրյա առավելագույնը, սմ	օրերի թիվը	ջրի առավելագույն քանակը ձյան մեջ, մմ
	I	II	III	IV	V	VI	VI I	VI II	IX	X	XI	XII				
Գյումրի	23 17	25 26	30 24	55 30	90 53	71 55	46 40	36 47	31 64	39 39	28 25	24 32	498 64	61	94	129

Գրունտի սառչման առավելագույն խորությունը, համաձայն ՀՀՇՆ II-7.01.2011 նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 142 սանտիմետր:

Քամու արագությունը 25 տարվա ընթացքում 24մ/վ է, 50 տարվա ընթացքում 27մ/վ:  
 Ձյան նորմատիվային ճնշումը՝ 70կգու/մ<sup>2</sup> է:  
 Քամու արագության նորմատիվային ճնշումը՝ 45կգ/մ<sup>2</sup> է:



Նկ. 3 Կլիմայական շրջանացման սխեմատիկ քարտեզ

**3.3 Տարածքի ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները**

Լեռնագրական տեսակետից տարածքը տեղադրված է Արագած լեռան հյուսիսարևմտյան լեռնաբազկի վրա: Ժամանակակից նստվածքները ներկայացված են Ախուրյան գետի և նրա վտակների այլուվիալ նստվածքներով՝ ավազախճակոպճային նստվածքներով, ավազների և կավավազների շերտիկներով ու ուսայնակներով: Երկրաբանական կառուցվածքում մասնակցում են չորրորդականի հասակի հրաբխային տուֆերը, անդեզիտաբազալտները և դաքիտային լավաները, ծածկված ժամանակակից այլուվիալ, էյուվիալ-դեյուվիալ, դեյուվիալ-պրոյուվիալ և էյուվիալ առաջացումներով՝ ավազային և խոշորաբեկորային գրունտներով:

Ուսումնասիրվող տարածքում առկա են տուֆեր՝ առանձին խորություններում ավազակավերի հաստ ենթաշերտերով, որոնց ծածկում են էյուվիալ-դեյուվիալ և տեխնածին առաջացումները:

Համաձայն կատարված ուսումնասիրությունների, հորատման և արխիվային նյութերի տվյալների՝ (նախկինում լաբորատոր ուսումնասիրման հիման վրա) ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են՝ լիցքային գրունտները, ավազակավեր, տուֆերը:

Տեղամասը վերնից-ներքև բաղկացած է հետևյալ գրունտերից, որոնց երկրաբանալիթոլոգիական կտրվածքին մասնակցում հետևյալ 3 շերտերը:

### Շերտ 1

Լիցքեր կազմված խճից, խճավազից: Գրունտը թույլ խոնավ է: Ժամանակակից տեխնածին առաջացումներ են: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն՝ ՇՀՈՒ IV-5-82-ի (246) III կարգ է:

### Շերտ 2

Ավազակավ, շագանակագույն, մանրախճի պարունակությամբ: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՀՈՒ IV-5- 82-ի III (33r) կարգ է:

### Շերտ-3

Դացիտային Տուֆ շագանակագույն, ցածր հորիզոններում մոխրագույն և սև գույնի: Ժամանակակից չորրորդական հասակի ապարներ են: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՀՈՒ IV-5-82-ի (37) V կարգ է:

Ուսումնասիրվող տեղամասում նախագծվող շինություն կառուցելու համար, որպես հիմնատակ ծառայում է շերտ 3-ը:

### 3.4. Հիդրոերկրաբանություն

Ռելիեֆի, կլիմայի և ջրաերկրաբանական կառուցվածքի առանձնահատկությունների շնորհիվ Շիրակի մարզի դիտարկվող տարածքն աչքի է ընկնում համեմատաբար թույլ զարգացած ջրագրական ցանցով:

Մակերևութային և մթնոլորտային ջրերի մեծ մասը թափանցում է տուֆերի տակ տեղադրված տարահատիկ ավազների, մասամբ խճի և կավավազների մեջ, առաջացնելով ստորտուֆային ջրատար հորիզոնը, որի համար որպես ջրամերժ շերտ են հանդիսանում լճային կավերը: Այս հորիզոնն ավելի ջրառատ է, ունի մինչև 15 մ հզորություն: Գրունտային ջրերը սնվում են Շիրակի գոգավորությունը շրջապատող լեռնաշղթաներից, գետերի ստորհունային ջրերից, ժամանակավոր ջրահոսքերից, մթնոլորտային տեղումներից և ոռոգման ցանցի ֆիլտրացիոն կորուստներից: Գետերից ոռոգման նպատակով վերցված ջրերի մոտ 28%-ը թափանցում է գրունտային ջրերի մեջ: Ջրերի քիմիական կազմը հիդրոկարբոնատա-կալցիումա- նատրիումային է, հազվադեպ՝ սուլֆատա- հիդրոկարբոնատա-մագնիումա-կալցիումային:

Տարածաշրջանում և տարածքում լայն տարածում ունեն պալեոգենի ապարների հետ կապված ստորերկրյա ջրերը, որոնք պատկանում են ճեղքային ջրերի տարատեսակներին: Ստորերկրյա ջրերի սնուցումը կատարվում է հալոցքային և մթնոլորտային տեղումների ջրերի ներծծման հաշվին: Կառուցապատվող տեղամասում մինչև 30 մետր խորությամբ փորված հորատանցքով ստորերկրյա ջրեր բացահայտվել են:

Հիդրոերկրաբանական տեսակետից, ըստ կատարված ուսումնասիրությունների և գրականական տվյալների տեղանքում գրունտային ջրերը գտնվում են 9.0-9.6 մ հորիզոններում:

**Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ** ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում նախագծվող կառույցի վրա՝ բացակայում են: Ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

### 3.5. Տարածքի սեյսմիկ բնութագիրը

Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ II -20.04.2020թ.-ի, տեղագնվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների  $A_{max} = 0.4g$  արագացմամբ, 9 ավելի բալլ սեյսմիկությամբ: աստիճան, իսկ գրունտները համապատասխանում են սեյսմիկ երրորդ կարգի գրունտների:

Սեյսմատեկտոնական տեսակետից շրջանը և տարածքը մտնում է Սևանա-Շիրակի սինկլինալի մեջ, որը բնութագրվում է տեկտոնական բազմազան ձևերի առկայությամբ, բարդացված խզումային և ծալքավոր «կառույցներով»:

### 3.6. Մթնոլորտային օդի որակի բնութագիրը

Օդային ավազանի աղտոտվածության մոնտորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Գյումրի համայնքի մթնոլորտային օդում իրականացվում են ընդհանուր փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մշտադիտարկումներ քաղաքում գործող 24 դիտակետերում և 1 ստացիոնար դիտակայանում:

Քաղաքի անշարժ դիտակայանում մթնոլորտում փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 301 փորձանմուշ: Փոշու միջին տարեկան կոնցենտրացիան չի գերազանցել ՍԹԿ-ն:

2020թ. քաղաքի մթնոլորտի աղտոտվածությունը (ըստ մթնոլորտն աղտոտող 3 նյութերի) միջինից ցածր մակարդակի է, մթնոլորտի աղտոտվածության ցուցանիշը 1.66 է (փոշի՝ 0.56, ծծմբի երկօքսիդ՝ 0.73, ազոտի երկօքսիդ՝ 0.37):

Վերջին 5 տարիների ընթացքում դիտվել է փոշու կոնցենտրացիայի նվազման տենդենց:




Քաղաքի 24 շարժական դիտակետերի պասիվ նմուշառիչներով մթնոլորտում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները որոշելու համար ընդհանուր առմամբ վերցվել է օդի 2165 փորձանմուշ: Որոշված նյութերի միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում որոշված նյութերի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.





**Գյումրու համայնքում մթնոլորտային օդում որոշված առաջնային աղտոտիչների միջին ամսական կոնցենտրացիաների համեմատությունը 2018, 2019 և 2020 թվականներին:**

*Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում որոշված կոնցենտրացիաների փոփոխությունները.*



2020թ-ին 2019թ-ի հետ համեմատած դիտվել է ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիայի աճ 1.1 անգամ, ընդհանուր փոշու կոնցենտրացիան նվազել է 1.1 անգամ, իսկ ազոտի երկօքսիդի դիտարկված կոնցենտրացիաներում էական փոփոխություններ չեն արձանագրվել: Նկ.5-ում ներկայացված են մթնոլորտային օդում 2020 թվականի հունվարի-փետրվար ամիսներին առաջնային աղտոտիչների չափված կոնցենտրացիաները, որոնք դիտվել են ՄԹԿ-ների տիրույթում:

**Գյումրի քաղաքում մթնոլորտային օդում որոշված առաջնային աղտոտիչների կոնցենտրացիաները 2020 թվականի հունվար-փետրվար ամիսներին:**



Համայնքում մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներն են հանդիսանում քաղաքաշինության և արդյունաբերության ռլորսները:

**3.7. Ջրային ռեսուրսներ**

Հայաստանի Հանրապետությունում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «զերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: Սևանա լճի և Արաքս գետի ջրի որակի գնահատումը դեռևս կատարվում է համաձայն 1990 թվականին ընդունված մակերևութային ջրերի աղտոտվածության ձկնատնտեսական սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների:

2019 թվականի տվյալների համաձայն ՀՀ գետերի 26.5%-ը գնահատվել է 2-րդ դասի («լավ» որակի), 40.8%-ը գնահատվել է 3-րդ դասի («միջակ» որակի), 11.2%-ը գնահատվել է 4-րդ դասի («անբավարար» որակի) և 21.4%-ը գնահատվել է 5-րդ դասի («վատ» որակի):

## Աղ. 4. ՀՀ մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտացանց

Դիտակետի համար	Ջրային օբյեկտ	Ջրավազանային կառավարման տարածք	Մարզ	Տեղադիրք
31	Ախուրյան	Ախուրյան	Շիրակ	1 կմ գյ. Ամասիայից վերև
32	Ախուրյան	Ախուրյան	Շիրակ	1 կմ գյ. Ամասիայից ներքև
33	Ախուրյան	Ախուրյան	Շիրակ	0.8 կմ ք. Գյումրիից վերև
34	Ախուրյան	Ախուրյան	Շիրակ	5 կմ ք. Գյումրիից ներքև
35	Ախուրյան	Ախուրյան	Արմավիր	0.5 կմ գյ. Բազարանից ներքև

**Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք**

Ախուրյան գետի ջրի որակը Ամասիա գյուղից ներքև հատվածում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով, Գյումրի քաղաքից վերև և ներքև հատվածներում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, նիտրիտ և ֆոսֆատ իոններով, մոլիբդենով, երկաթով, ընդհանուր ֆոսֆորով և կախյալ նյութերով: Բազարան գյուղից ներքև հատվածում գետի ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով, մոլիբդենով, մանգանով, երկաթով և կախյալ նյութերով:


Աշոցք գետի ջրի որակը Մուսայելյան գյուղից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված արսենով, երկաթով և բորով:

Կարկաչուն գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված լուծված թթվածնով, ֆոսֆատ իոնով և ընդհանուր ֆոսֆորով:

## ՀՀ մակերևութային ջրերի որակը 2020 թվականին



**ԱԽՈՒՐՅԱՆ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԴԻՏԱՑԱՆՑ**



**3.8. Հողային ռեսուրսներ և հողօգտագործում**

Շիրակի մարզում առանձնացվում են հողերի տարածման հետևյալ հիմնական գոտիները՝ Լեռնաշագանակագույն հողեր-տարածվում են մարզի հարավում, նախալեռնային գոտու չոր տափաստաններում, Արագածի ցածրադիր լանջերից մինչև Ախուրյան գետի հովիտը՝ 1450-1600 մ բարձրությունների սահմաններում: Ձևավորվում են շոգ և համեմատաբար չոր կլիմայական պայմաններում: Հումուսի պարունակությունը կազմում է 3-4%: Լեռնատափաստանային սևահողեր - սրանք տարածվում են մարզի 1500-2200 մ, երբեմն մինչև 2400-2500 մ բարձրությունները, ընդգրկում են Շիրակի և Աշոցքի սարահարթերի մեծ մասը և դրանք եզերող նախալեռնային և միջին բարձրության գոտիները: Հողի վերին շերտը հումուսացված է, հումուսի պարունակությունը հասնում է 4-5%-ից մինչև 10-11%, իսկ սևահողերի միջին հզորությունը՝ 50-65 սմ: Լեռնային, մարգագետնատափաստանային հողեր - տարածվում են սևահողերից վեր 2200-ից մինչև 2600-2700 մ բարձրություններում: Հումուսի պարունակությունը կազմում է 8-12%: Լեռնային մարգագետնային հողեր - տարածված են մարգագետնատափաստանային հողերից վեր: Հողաշերտի հզորությունը փոքր է. վերին մասերում այն հազիվ հասնում է 15-20 սմ-ի: Լեռնամարգագետնային հողերը ծածկված են բարձրորակ արոտներով:

Կառուցապատվող տարածքը դրադեցնում է 0,1, 1.192609 հա /ընդհանուր՝ 1.1292609հա/ հա մակերես և սեփականության իրավունքով պատկանում է <<Դ ԸՆԴ ԷԴ ԻՆՎԵՍ ԳՐՈՒՊ>> ՍՊ ընկերությանը /անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի վկայական հ. 13042021-08-0042 տրվ. 13.04.2021թ./: Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը ներկայացվում է սույն հայտին կից փաստաթղթերում:

Ներկայացվող տարածքում հողային ծածկույթն արդեն իսկ խախտված է, նախկինում տեխնածին ազդեցություններից, քանի որ տարածքն օգտագործվել է արտադրական նպատակով:

Կառուցապատվող տարածքում տարածված են խճաքարային, տեղ-տեղ կարբոնատային լիցքային գրունտների ձևով հողերը, որտեղ բուսածածկը և հողածածկը գրեթե բացակայում են և հնարավոր չէ շինարարության ընթացքում բուսաշերտը հանել և պահեստավորել:

Հողային աշխատանքների ժամանակ, գրունտի մշակման աշխատանքներից առաջացող լիցքային գրունտը կուտակվելու է կազմակերպված շինարարական հրապարակի տարածքում, որի մի մասը օգտագործվելու հետլիցքի համար, իսկ մնացորդային քանակը շինհրապարակից հեռացվում է աղբավայր:

**3.9. Կենսաբազմազանություն**

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում են ՀՀ Շիրակի ֆլորիստիկական շրջանում: Շիրակի մարզում բուսական աշխարհը խիստ բազմազան է, որին նպաստել են բարձրությունների մեծ տարբերությունները, լեռնալանջերի տարբեր կողմնադրությունները և մակերևույթի թեքությունները:

Գործունեության տարածքը գտնվում է Գյումրի քաղաքային միջավայրում, կառուցապատված գոտում, ուր բացակայում են բնական լանդշաֆտները: Տարածքում

բուսածածկույթը և հողային ծածկույթը հանդիպում են տեղ-տեղ: Տարածքն արդեն իսկ խախտված է, նախկինում օգտագործվել է տարբեր արտադրական նպատակներով: Քարքարոտ, ավազային, հողածածկույթի վրա տեղ-տեղ վայրի ծառատեսակներ են, տեղ-տեղ ինքնաբերաբար աճած նոսր բուսականություն:

Քանի որ բնութագրվող տեղանքը գտնվում է արդեն իսկ յուրացված և կառուցապատված քաղաքային միջավայրում, ուստի տեղանքում էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանական տեսակներ և կենդանիների միգրացիոն ուղիներ չեն կարող դիտարկվել:

Ստորև բերված է Գյումրու տարածաշրջանի ֆլորայի և ֆաունայի վերաբերյալ տեղեկատվությունը:

### 3.9.1. Բուսական աշխարհ

Գյումրու տարածաշրջանը Շիրակի մարզին բնորոշ հանդես է գալիս բուսական աշխարհի խիստ բազմազանությամբ, ինչին նպաստել է տարածաշրջանում բարձրությունների մեծ տարբերությունները:

Տարածքի բուսականությունը պատկանում է հիմնականում տափաստանային տիպին, գետահովիտներում աճում են ակացիա, թխկենի, հացենի և այլ ծառատեսակներ: Գերակշռում են լեռնատափաստանային սևահողերը՝ տարախոտահացազգի խոտաբույսերի տարածմամբ: Տարածաշրջանում առկա են հացահատիկային զանազան խոտաբույսերի ֆորմացիաներ: Լեռնային տափաստանները ներկայացված են երեք՝ փետրախոտային (*Stipa*), շյուղախոտային (*Festuca*) և ցորնուկային (*Bromus*) տափաստանների ֆորմացիաներով: Բնութագրվող տարածաշրջանում առավել հանդիպող բուսատեսակներից են. բարդին (*Populus*), ակացիան (*Robinia*), թղկի (*Acer*), սզնի (*Crataegus*), ուռատերև տանձենի (*Pyrus salicifolia*), սովորական հացենի (*Fraxinus excelsior*), աղեղնաեզր ասպիրակ (*Spiraea crenata*), արևելյան ծորենի (*Berberis orientalis*), չմենի (*Cotoneaster integerrima*), վրացական ցախակեռաս (*Lonicera iberica*), սովորական լեռնաչամիչ (*Ephedra procera*), թփային հասմիկ (*Jasminum fruticans*), թեղի (*Ulmus*), ալուչա (*Prunus*), փշատենի (*Elaeagnus*), ուռենի (*Salix*), մասրենի (*Rosa canina*) այլն բուսատեսակներ:

Շիրակի մարզում հանդիպում են ՀՀ Կարմիր գրքում գրանցված շուրջ 40 հազվագյուտ և անհետացող բուսատեսակներ: Կարելի է փաստել, որ նախատեսվող գործունեության տարածքում ՀՀ կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ չեն կարող լինել, քանի որ նախատեսվող գործունեության վայրը գտնվել և շարունակվում է գտնվել զարգացած քաղաքային, կառուցապատված միջավայրում՝ մարդածին ազդեցության տակ:

### 3.9.2. Կենդանական աշխարհ

Աշխարհագրական դիրքի առումով Շիրակի մարզն ընկած է Կովկասյան և Փոքրասիական կենդանաաշխարհագրական մարզերի միջև: Կենդանական աշխարհի բազմազանությունը կապված է բուսականության բազմազանությամբ: Նկարագրվող տարածքում կենդանական աշխարհը ներկայացված է տափաստանային, բարձր լեռնային լայն տարածված կենդանական ձևերով:

Գյումրու տարածաշրջանի կենդանական աշխարհը ևս հանդես է գալիս Շիրակի մարզին բնորոշ կենդանական ձևերով, որոնք ևս ներկայացված են տափաստանային և բարձր լեռնային կենդանական ձևերով և քիչ արտահայտված են տեղական էնդեմիկ ձևերը: Երկկենցաղներից և սողուններից այստեղ հանդիպում են դողոշների, գորտերի, մողեսների և օձերի բազմաթիվ տեսակներ: Լայնորեն տարածված կենդանատեսակներից այստեղ հանդիպում են. կաթնասուններից՝ նապաստակ (*Lepus europaeus*), աղվես (*Vulpes vulpes*), գայլ (*Canis lupus*) և մի շարք կրծողներ: Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող կենդանատեսակների ցուցակը բերված է ստորև.

- 1.Մողես *Lacerta armeniaca*
- 2.Դալի մողես *L. dahli*
- 3.Վալենտինի մողես *Darevskia valentini*
- 4.Նախյան մողես *L.nairensis*
- 5.Հայկական իժ *Vipera raddei*
- 6.Տափաստանային իժ *V. erivanensis*
- 7.Խայտաբղետ իժանման սահնօձ *Coluber ravergieri*
8. Նապաստակ *Lepus europaeus*
9. Աղվես *Vulpes vulpes*
10. Գայլ *Canis lupus*
11. Դաշտամուկ *Microtus arvalis*
12. Կանաչ դողոշ *Pseudepidalea viridis*

Պետք է փաստել, որ դիտարկվող տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը, առկա է կառուցապատում, տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ, ինչի պարագայում կենդանատեսակների հանդիպելը քիչ հավանական է, կամ բացառվում է:

**3.10. Նախատեսվող գործունեության տարածաշրջանի նկարագիրը և սոցիալ տնտեսական վիճակը**

Գյումրի՝ մակերեսը 4429.5քառ.մ է, բնակչությունը՝ 157332 մարդ, բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1550 մ, հեռավորությունը մայրաքաղաքից՝ 125 կմ:

Գյումրի համայնքն ու նրան հարող տարածքները գտնվում են տրանսպորտային ցանցով առավել ապահովված գոտում: Գյումրիով է անցնում Վրաստանի, Ռուսաստանի (Երևան-Գյումրի-Վանաձոր- Թբիլիսի-Բաթումի-Փոթի, նաև դեպի Մոսկվա) և Թուրքիայի հետ կապող երկաթուղիները: Գյումրին ունի շահագործվող տեխնիկական բավարար մակարդակ և թոփաքների մեծացման հնարավորություն ունեցող միջազգային նշանակության օդանավակայան: Չարգացած է նաև ավտոմոբիլային ճանապարհների ցանցը: Գյումրու միջով անցնում է Մայիսյան-Բավրա-Վրաստան, Գյումրի-Կարս, Գյումրի-Վանաձոր-Իջևան-Ադրբեջան սահմանների միջպետական նշանակության ավտոճանա- պարհները: Համայնքի արևմտյան հատվածներով անցնում են Երևան-Արմավիր-Անի-Պեմզա-Գյումրի, Գյումրի-Ամասիա-Պաղակն հանրապետական նշանակության ճանապարհները: Համայնքը շրջակա բնակավայրերի հետ կապված է տեղական նշանակության ճանապարհներով:

Ջրաապահովվածության պայմաններով համայնքը գտնվում է տնտեսական նպատակներով օգտագործման համար պիտանի ստորգետնյա ջրերով ապահովված գոտում: Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը կառավարվում է "Շիրակջրմուղկոյուղի" ՓԲԸ-ի կողմից: Ջրամատակարարման համար օգտագործվում և նախատեսվում է օգտագործել Վերին Ախուրյանի հանքավայրի և Գյումրու իջվածքի ստորգետնյա ջրերը:



Համայնքի սանիտարական մաքրման ենթակա փողոցների, հրապարակների, կամուրջների, մայրերի և այլ կառույցների ընդհանուր մակերեսը կազմում է 650000 մ<sup>2</sup>: Համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները կազմակերպվում են քաղաքապետարանի աշխատակազմի կողմից: "

Համայնքում գործում են կրթական հաստատություններ, որից՝ ԲՈՒՀ-եր - 10-ը ուսումնարաններ - 3-ը՝ վարժարաններ - 4-ը՝ դպրոց - 7-ը՝ միջնակարգ դպրոցներ - 4-ը՝ հիմնական դպրոցներ - 24-ը՝ հատուկ դպրոցներ - 1-ը: Վերը նշված հաստատությունները հանդիսանում են հանրապետական և մարզային ենթակայության կառույցներ:

Համայնքում գործում է համայնքային ենթակայության 24 մանկապարտեզ, որից 3-ը գործում է տնակային պայմաններում: "Արևիկ" մանկապարտեզի գործունեությունը ժամանակավորապես դադարեցված է՝ պայմանավորված հիմնանորոգման աշխատանքների կատարումով:

**Մշակույթ** Համայնքում գործում է 7 գրադարան, 7 թանգարան, որոնցից 4 -ը՝ համայնքապետարանի ենթակայության տակ են: Դրանք են՝ Հովհ. Շիրազի հուշատուն-թանգարանը, Ավ.Իսահակյանի տուն-թանգարանը, Մ.Մկրտչյանի թանգարանը, Ասլամազյան քույրերի պատկերասրահը: Համայնքում գործում է երաժշտական և արվեստի 7 դպրոց: Համայնքապետարանի ենթակայության տակ գործում է երաժշտական 6 դպրոց՝ 1310 աշակերտով: Այդ դպրոցներն իրականացնում են արտադպրոցական գեղագիտական դաստիարակություն: Համայնքի տարածքում գործում է "Զբոսայգիներ և պուրակներ" ՀՈԱԿ՝ 5 աշխատակցով:

**3.11. Պատմամշակութային հուշարձաններ և բնության հատուկ պահպանվող տարածքներ**

Գործունեության իրականացման տեղանքին հարակից չկան արգելոցներ, ազգային պարկեր կամ հատուկ նշանակության պահպանվող տարածքներ:

ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ տարածքի բնության հուշարձանների ցանկը, համաձայն որի Շիրակի մարզի տարածքում հաշվառված հետևյալ բնության հուշարձաններից որևէ մեկը չի առնչվում գործունեության տարածքի հետ:

Աղյուսակ 7.

Հ / Հ	Անվանումը	Գտնվելու վայրը
1	«Ամասիայի» քարանձավ	Շիրակի մարզ, Ամասիա գյուղից 1.5 կմ արլ, Ախուրյան գետի կիրճի աջ ափին, նրա հունից 80 մ բարձրության վրա, ծ.մ-ից 2000 մ բարձրության վրա
2	«Կրիա» քարե բնական քանդակ	Շիրակի մարզ, Երևան-Գյումրի խճուղու ձախ կողմում, Լանջիկ և Մարալիկ բնակավայրերի միջև
3	«Ամասիայի	Շիրակի մարզ, Ամասիա գյուղից 1.5 կմ հվ-արմ, Ախուրյան

	աղբյուր N 2»	գետի կիրճի ձախ ափին, ծ.մ-ից 1750 մ բարձրության վրա
4	«Ամասիայի աղբյուր N 3»	Շիրակի մարզ, Ամասիա գյուղից 1.8 կմ հվ-արմ, Ախուրյան գետի կիրճի ձախ ափին, ծ.մ-ից 1745 մ բարձրության վրա
5	«Գոմերի տակի աղբյուր»	Շիրակի մարզ, Աշոցք գյուղից հվ-արլ ծայրամասում, ծ.մ-ից 1980 մ բարձրության վրա
6	«Աչքասար» աղբյուր	Շիրակի մարզ, Բավրա գյուղից 5 կմ հս-արլ, ծ.մ-ից 2430 մ բարձրության վրա
7	«Զույգաղբյուր» աղբյուր	Շիրակի մարզ, Զույգաղբյուր գյուղից 200 մ արմ, Աշոցք գետակի աջ ափին, ծ.մ-ից 2015 մ բարձրության վրա
8	«Լուսաղբյուր» աղբյուր	Շիրակի մարզ, Հարթաշեն գյուղից 1.2 կմ արլ, Գյումրի-Տաշիր ավտոճանապարհից 150 մ ձախ, ծ.մ-ից 2030 մ բարձրության վրա
9	«Անանուն» աղբյուր	Շիրակի մարզ, Հարթաշեն գյուղի դպրոցից 1.8 կմ հս-արլ, ծ.մ-ից 2180 մ բարձրության վրա
10	«Անալիճ կան»	Շիրակի մարզ, Արթիկի ենթաշրջան, Ախուրյանի ջրավազանում, ծ.մ-ից 3200 մ բարձրության վրա
	«Թագական»	Շիրակի մարզ, Մանթաշ գետի վերին հոսանքում, ծ.մ-ից 3050 մ բարձրության վրա
	«Ամասարլ»	Շիրակի մարզ, Ախուրյան գետի աջակողմյան վտակի վրա, համանուն գյուղից 1 կմ արլ
	«Մանթաշլու»	Շիրակի մարզ, Մեծ Մանթաշ գյուղից 16 կմ հվ-արմ, համանուն գետի աջ վտակի վրա
	«Մանթաշլու» ջրվեժներ	
14	«Դողդոջուն կաղամախու ծառուտներ»	Շիրակի մարզ, Ամասիա գյուղից 3 կմ արմ, ծ.մ-ից 3200 մ բարձրության վրա
15	«Փետրախոտային տափաստան»	Շիրակի մարզ, Ամասիա գյուղից 3 կմ հս-արմ

**Կառուցապատման համար տրամադրվող տարածքը չի առնչվում նաև պատմամշակութային հուշարձանների հետ:**

ՀՀ Կառավարության 2004թ. սեպտեմբերի 9-ին թիվ 1270-Ն որոշմամբ Շիրակի մարզի հուշարձանների պետական ցանկում Գյումրու տարածքում հաշվառվել են թվով 27 միավոր պատմամշակութային հուշարձաններ, որոնք գործունեության իրականաց ման արդյունքում ազդեցության չեն ենթարկվի, քանի որ գտնվում են զգալի հեռավորության վրա:

Այսպիսով ելնելով վերոգրյալից պետք է նշել, որ ուսումնասիրվող տարածքը չի առնչվում Գյումրի քաղաքում գոյություն ունեցող մշակութային հուշարձանների, պահպանության ենթակա տարածքների, կամ կենսաբազմազանության տեսակների հետ:

### Տարածքի իրադրության սխեմա



**4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ**

**4.1 Ռիսկերի գնահատում**

Նախատեսվող գործունեության ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կանխատեսվում են գոյություն ունեցող շինությունների քանդման արդյունքում, շինարարության փուլում, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ՝ պայմանավորված շինարարության տևողությամբ և կլինեն տեղայնացված՝ հիմնականում ընդգրկելով բնակելի համալիրի կառուցապատվող տարածքը: Բոլոր ազդեցությունները գնահատվում են կառավարելի՝ բնապահպանական միջոցառումների պլանում մշակված միջոցառումների արդյունավետ իրականացման դեպքում: Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ ազդեցությունները իրենց բնույթով կլինեն սահմանափակ և կարճատև, պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքներով:

Շինարարության փուլում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված են արտանետումներով, որոնք կարող են առաջանալ՝

- Գոյություն ունեցող շենքերի քանդման արդյունքում
- Նոր կառուցվող բնակելի համալիրի շինարարության ընթացքում
- Հիմքերի փորման ընթացքում
- Դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի

շահագործման ժամանակ:

- Հողային զանգվածների և շինադրի տեղափոխման հետ կապված,
- Շինարարական տեխնիկայի շահագործմամբ,
- Բետոնային աշխատանքների իրականացմամբ,
- Շինհրապարակների տեղադրման և վառելիքաքսայուղերի

պահեստավորման հետ կապված,

- Շինարարության ընթացքում մեքենաների և տեխնիկայի տեղաշարժից մերձակա բնակչությանը պատճառվող անհանգստությամբ

- Շինարարական տեխնիկայի շահագործման ընթացքում աղմուկի մակարդակի ավելացմամբ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու և փոխհատուցելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

**4.2 Օդի աղտոտում**

Նոր կառուցվող բնակելի համալիրի շինարարության ընթացքում հիմնականում կանխատեսվում է օդի աղտոտում՝ պայմանավորված հողային աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու և ծխագազերի ժամանակավոր արտանետումներով, որոնք առաջանում են բնակելի համալիրի կառուցման հողային աշխատանքներից և տեխնիկական միջոցների աշխատանքից՝ դիզելավառելիքի աշխատանքի դեպքում:

Շինարարության ընթացքում արտանետումները կլինեն տեղայնացված, ենթակա արագ ցրման և ժամանակավոր՝ հաշվի առնելով շինարարական աշխատանքների ժամանակավոր բնույթը: Հնարավոր վնասակար ազդեցությունները կբացառվեն կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացման դեպքում, մասնավորապես՝ փոշու արտանետումները նվազեցնելու համար կիրականացվի շինհրապարակի պարբերաբար ջրցանում, շինանյութ տեղափոխող մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի թափքի ծածկման պայմաններում, ինչպես նաև կիրականացվի շին հրապարակ մուտք գործող և լքող մեքենաների անվադողերի լվացում:

Հարակից բնակելի և հասարակական շենքերից բողոքների դեպքում կառուցապատողի կողմից կիրականացվի նաև օդի աղտոտվածության գործիքային չափումներ, որոնք կհամեմատվեն օրենսդրական նորմերի և ելակետային տվյալների հետ:

### **4.3 Աղմուկի և թրթռումների ազդեցություն**

Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին: Մակարդակների չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում: Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը՝ հաշվի առնելով առկա ազդակիր շինությունների (բնակելի և հասարակական շենքեր) հեռավորությունը շինտարածքից (մոտ 20-50մ): Հարակից տների և շենքերի բնակչության հնարավոր բողոքների դեպքում կիրականացվեն աղմուկի և թրթռումների մակարդակների գործիքային չափագրումներ, իսկ շինարարության ընթացքում որպեսկարևորագույն միջոցառումներ, անհրաժեշտ է՝

- Խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը;

- Աղմկահարույց աշխատանքները հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին:

- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:

- Բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը:

### **4.4 Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն**

Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման և որոշ շինարարական աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի կենցաղային կարիքները հոգալու նպատակով: Անհրաժեշտ ջրաքանակը շին հրապարակ կմատակարարվի տարածքում գոյություն ունեցող ջրամատակարարման ցանցից:

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրը օգտագործվելու է աշխատողների խմելու և կենցաղային նպատակների, ինչպես նաև փոշենստեցման համար:

Շինարարությունը իրականացնող անձնակազմը օգտվելու է ժամանակավոր տնակներից:

Ջրամատակարարումը և ջրահեռացումն իրականացվելու են քաղաքային ցանցերին միանալուց հետո: Այդ միացումները կատարվելու են առաջնահերթ:

**4.5 Բնապահպանական միջոցառումներ**

Շրջակա տարածքների և գործունեության ազդեցության ենթակա մոտակա բնակչության վրա բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված են շինարարական աշխատանքների իրականացմամբ, կրում են ժամանակավոր բնույթ և ունեն կարճատև ազդեցություններ: Այդ ազդեցությունները կարող են կանխվել կամ նվազեցվել բնապահպանական կառավարման պլանով (ԲԿՊ) նախատեսված՝ սոցիալական ազդեցությունները մեղմացնող միջոցառումների և բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացման արդյունքում, որին պարտավոր են հետևել՝ շինարարը, հսկող և վերահսկող մարմինները:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա տարածքների և սոցիալական միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների կանխման, կամ մեղմացման միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների ներկայացվում են ստորև:

**4.5.1. Մթնոլորտային օդ**

Օդային ազդանք աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- Շինարարական աշխատանքների /փոշեառաջացման աշխատանքներ/ ընթացքում իրականացնել ջրցան,
- Սորուն նյութերի ժամանակավոր կուտակումները և շինհրապարակը ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, կամ հատուկ ցանցերով՝ կանխարգելելու համար փոշու տարածումը,
- Պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաբերում:
- Գրունտի և սորուն նյութերի տեղափոխումն իրականացնել ծածկված թափքերով բեռնատարներով:
- Խուսափել անորակ վառելիքի օգտագործումից,
- Օգտագործել փոշու տարածումը կանխող ցանցեր:

**4.5.2. Ջրային ռեսուրսներ**

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- Շինարարական աշխատանքների համար օգտագործել տեխնիկական որակի ջուր՝ տարածքում առկա ռոզման ջրացանցից,
- Ջրցանի ծավալները հաշվարկել այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,

- Տարածքի հոսքաջրերը միավորել մեկ բակային ցանցում և միացնել գոյություն ունեցող հեղեղատար ցանցին:

### **4.5.3. Հողային ռեսուրսներ**

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով անհրաժեշտ է՝

- Շինարարական նյութերի և քսայուղերի ժամանակավոր պահեստները տեղադրել բետոնապատ մակերեսի վրա, որտեղ ապահովված կլինի հոսակորուստների հավաքման համակարգով,

- Քսայուղերի, հեղուկ վառելիքի հնարավոր մնացորդային քանակների առաջացման դեպքում վերջիններս պահել հատուկ անթափանց, փակ տարաներում՝ հետագայում որպես երկրորդային նյութ վերաօգտագործել շինարարական այլ աշխատանքներում, կամ հանձնել վերամշակող կազմակերպություններին,

- Աշխատանքների ավարտից հետո տարածքը բարեկարգել, վերականգնել և մաքրել՝ առաջացած թափոնները տեղափոխելով Գյումրիի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր,

Շինարարական և կենցաղային աղբով շրջակա տարածքների աղտոտումը բացառելու նպատակով նախատեսվում է՝

- Շինհրապարակում բացառել թափոնների ժամանակավոր կուտակումները,  
- Թափոնները ժամանակին տեղափոխել հատկացված վայրեր՝ համայնքի ղեկավարի կամ աղբավայրը շահագործողների հետ նախապես կնքված պայմանագրերի համաձայն,

- Վտանգավոր թափոնների հանձնում ընկերությունների, որոնք ունեն վտանգավոր նյութերի վնասագերծման, կամ տեղակայման արտոնագիր,

- Շինանյութերի ձեռք բերում միայն լիցենզավորված մատակարարներից:

### **4.5.4. Աղմուկ**

- Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- Շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,

- Պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,

- Շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:

- Խուսափել աղմկահարույց մեքենաների և սարքավորումների օգտագործումից, անհրաժեշտության դեպքում խլացուցիչների տեղադրում:

### **4.5.5. Կենսաբազմազանություն**

Հաշվի առնելով, որ նախատեսվող գործունեությունը իրականացվելու է Գյումրի քաղաքի բնակեցված և կառուցապատված թաղամասում, կենսաբազմազանությանը վտանգ չի սպառնում և բնապահպանական միջոցառումներ չեն նախատեսվում:



***Ճանապարհների խաթարման և ծանրաբեռնվածության հետևանքով բնակչությանը պատճառված անհանգստությունը մեղմելու նպատակով նախատեսվում է՝***

- Շինարարական հրապարակում բեռնատար մեքենաների ժամանակավոր կայանման համար տարածքների տրամադրում,
- Շինհրապարակում խուսափում՝ շինարարական ու կենցաղային աղբի այրումից և կուտակումից,
- Շինարարական աշխատանքների վերաբերյալ մոտակա բնակչությանը իրազեկում, որոնց արդյունքում կարող են ավելանալ փոշու քանակները, աղմուկի մակարդակը և ժամանակավորապես փակվեն ճանապարհները,
- Ցուցանակների տեղադրում, ինչպես նաև ժամանակավոր անցումների նախատեսում՝ որպես այլընտրանքային ճանապարհներ:

***Շինարարության փուլում հնարավոր սոցիալական ազդեցություններից խուսափելու նպատակով նախատեսվում է՝***

- Թույլ չտալ շինարարական աշխատանքների կատարումը սահմանված ժամերից դուրս.
- Շինհրապարակը ցանկապատել և վերահսկել՝ կանխելու համար չլիազորված անձանց մուտքը շինհրապարակ,
- Վտանգավոր տեղամասերում տեղադրել նախազգուշացնող նշաններ,
- Որակավորված աշխատակիցների միջոցով իրականացնել սարքավորումների պարբերական զննումներ
- Շինարարների համար՝ անվտանգության աուդիտների, առաջին օգնության և անվտանգության դասընթացների պարբերաբար կազմակերպելում և իրականացում,
- Հրապարակում աշխատող բանվորական կազմին տրամադրել անվտանգության միջոցներ, ապահովել խմելու ջրի և հանգստի կազմակերպան պայմաններ:

**4.5.6. Թափոնների և այլ նյութերի կառավարումը**

Գյումրի քաղաքում բնակելի համալիրի կառուցման շինարարական աշխատանքների ընթացքում կառաջանան տարբեր տեսակի թափոններ:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա բնակելի համալիրի կառուցման ընթացքում, դա մնացորդային գրունտն է և շինարարական աղբը որոնք կառաջանան բնակելի շենքերի կառուցման հողային աշխատանքներից և շինարարական աշխատանքներից:

Շինարարական աշխատանքների ժամանակ կառուցապատվող տարածքի համար հողային աշխատանքներից առաջացող հանույթի, մշակվող գրունտի ծավալը բոլոր մասնաշենքերի և ավտոկայանատեղիի համար ընդհանուր կկազմի 28.000 մ3, հետլիցքի ծավալը կկազմի՝ 3000 մ3: Հիմքերի փորման ժամանակ առաջացած մնացորդային հողային գրունտը՝ 25.000 մ3 կտեղափոխվի կանոնավոր կերպով (ըստ ժամանակացույցի) Գյումրիի քաղաքապետարանի հետ համաձայնեցված, կամ հնարավորության դեպքում կրկնակի կօգտագործվի:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի շինարարական թափոնները /ընդհանուր 500իւ/մ ծավալով/ տեղադրվելու են Գյումրու համայնքապետարանի կողմից թույլատրված, տարածքում գործող թափոնների աղբավայր:

Գործունեության ընթացքում կենցաղային աղբը կհավաքվի կենցաղային աղբի համար նախատեսված աղբամաններում և կանոնավոր կերպով կհեռացվի շինարարական հրապարակից: Իսկ շին աշխատանքների ընթացքում առաջացած երկրորդային օգտագործման համար պիտանի նյութերը (հիմնականում մետաղի ջարդոններ և փայտանյութ) կտեսակավորվեն և կպահվեն հրապարակում նախատեսված վայրերում՝ շինարարի կողմից հետագա օգտագործման նպատակով:

Շինարարական աշխատանքների ընթացքում գոյացող թափոնները գնահատվում են հետևյալ տեսակային կազմով և վտանգավորության աստիճանով (բն. նախարարի N430Ն հրամանի հավելված, 25 դեկտեմբեր, 2006թ):

*Առաջացող վտանգավոր թափոնների որակական և քանակական բնութագրերը:*

Թափոնի անվանումը	Ծածկագի րը	Վտանգավոր ության դասը	Քանակը
«Կենցաղային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)»	91200400 01 00 4	IV	≤ 5 կգ/օր
«Սպառողական հատկությունները կորցրած դիզելային յուղերի մնացորդներ»	54100303 02 03 3	III	≤ 25 լ/շին
«Բանեցված շարժիչի յուղերի թափոններ»	54100301 02 03 3	III	
«Շինարարական աղբ», ներառյալ շենքերի քանդումից առաջացող թափոնները	912006000 1004	IV	Ընդհանուր 500իւ/մ ծավալով

Գործունեության ընթացքում կենցաղային աղբի մնացորդները հավաքելու նպատակով կտեղադրվեն աղբամաններ, որտեղից աղբը կանոնավոր կերպով (ամենաուշն երկու օրը մեկ) վարչական շրջանի կամ աղբահանող ընկերության հետ կնքվող պայմանագրային հիմունքներով կհեռացվի հանրային աղբաման: Աշխատանքների ընթացքում քայտուղերի, հեղուկ վառելիքի հնարավոր մնացորդային քանակների առաջացման իրավիճակում նախատեսվում է նշված նյութերը պահել հատուկ անթափանց և փակ տարաներում (ավազե, մետաղական կամ բետոնե) հիմքերի վրա, ինչը կբացառի վերջիններիս արտահոսքով պայմանավորված հողային համակարգերի վրա հնարավոր աղտոտման ռիսկերը: Որոնք հետագայում որպես երկրորդային նյութ կվերաօգտագործվեն շինարար կապալառուի կողմից այլ

աշխատանքներում, կամ կհանձնվեն նշված թափոնները մշակող լիցենզավորված կազմակերպություններին:

**4.6 Հնարավոր արտակարգ իրավիճակները և մեղմացման միջոցառումները**

Շինարարական աշխատանքների ընթացքում կանխատեսվում են հետևյալ ռիսկերը.

- հրդեհի առաջացում
- հեղուկ նյութերի արտահոսք
- աշխատողների վնասվածքներ
- շահագործվող տեխնիկայի հետ վթարներ
- անբարենպաստ օդերևութաբանական պայմաններ:

Հնարավոր արտակարգ իրավիճակներից և վերոնշյալ ռիսկերից խուսափելու նպատակով շինարարական տեղամասում պարբերաբար կիրականացվեն հետևյալ միջոցառումները.

- Մինչ աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները՝ այդ թվում նաև վարորդները, հրահանգավորվելու են ըստ աշխատանքի անվտանգության կանոնների, ինչը պատշաճ եղանակով գրանցվելու է անվտանգության վարման գրանցամատյանում:

- Շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հազեցվելու են հրդեհաշիջման առաջնային միջոցներով, առաջին բուժօգնության դեղատուփով, իսկ աշխատողներն անցնելու են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում/պատրաստվածություն:

- Բանվորական և ղեկավար կազմը ապահովվելու է սեզոնային արտահագուստով, անվտանգության սաղավարտով և այլ պաշտպանիչ միջոցներով:

- Հեղուկ նյութերը և քսայուղերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

- Շինարարական մեքենաների վառելիքի լիցքավորումը և քսայուղերի հետ առնչվող բոլոր գործողությունները կիրականացվեն հատուկ մասնագիտացված կենտրոններում:

- Հնարավոր վնասվածքների, պատահարների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, իսկ անհրաժեշտության դեպքում կտեղափոխվի բժշկական հաստատությունը:

- Շինարարական հարթակում կապահովվի արտակարգ իրավիճակների վարման մատյան, որը շինարար կապալառուն պարտավոր կլինի պատշաճ մակարդակով վարել:

- Շինարարական հրապարակում կապահովվեն արտակարգ իրավիճակների մասին պատմող և արձագանքման քայլերը լուսաբանող պաստառներ/պլակատներ:

- Արգելվում է տանիքում և բարձրության վրա աշխատանքներ իրականացնելը, մշուշի, ամպրոպի և քամու 6 բալ արագության գերազանցման դեպքերում:

- Խտացված գազով բալոնը տեղափոխել միայն հատուկ պատգարակի միջոցով: Չի կարելի բալոնին մոտենալ յուղոտված հագուստով, արգելվում է գազոգնեթատորի մոտակայքում ծխելը:

- Եռակցման աշխատանքներ իրականացնելու ժամանակ հետևել, որ էլեկտրա և գազաեռակցված սարքերը գտնվեն ճանապարհներից և անցումներից մի կողմ և էլեկտրաեռացման սարքը և եռակցվող նյութը լինեն հողանցված:

Նշված միջոցառումների պատշաճ մակարդակով ապահովման դեպքում, հնարավոր կլինի նվազագույնի հասցնել արտակարգ իրավիճակների ռիսկերը, իսկ առաջացման դեպքում հնարավոր կլինի ձեռնարկել արագ և արդյունավետ հակազդման միջոցառումներ:

#### **4.7 Աշխատանքի անվտանգություն և առողջություն**

Շինարարական աշխատանքների ընթացքում կարևորվում է ստորև բերված աշխատողների անվտանգության ապահովման և հակահրդեհային միջոցառումների ապահովումը, մասնավորապես .

- Նախքան աշխատանքի սկսելը կկատարվի շինհրապարակի ժամանակավոր ցանկապատում և կտեղադրվեն մուտքը արգելող ցուցափեղկեր/նշաններ:

- Շինարարությունում շահագործվող կռունկը պետք է անցած լինի անվտանգության տեխնիկայի փորձաքննության և գրանցված լինի «Տեխնիկայի անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի ռեգիստրում:

- Հակահրդեհային անվտանգությունը շինհրապարակում, աշխատատեղում և աշխատանքի տեղամասերում անհրաժեշտ է ապահովել համապատասխան «Հակահրդեհային անվտանգության կանոններ» պահանջներին համապատասխան, ապահովել կրակմարիչի առկայությունը և հրդեհային անվտանգության վերաբերյալ պաստառներն այլն:

- Մինչև աշխատանքների սկսելը աշխատողներին պետք է հրահանգավորել անվտանգության տեխնիկայի մասին: Բանվորների աշխատանքների պաշտպանությունը պետք է ապահովվի վարչակազմի կողմից, նրանց անհատական պաշտպանական միջոցներ տրամադրամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ, սաղավարտ և այլն):

- Տանիքի և բարձրության վրա աշխատանքների իրականացման ժամանակ, աշխատանքներն անհրաժեշտ է կատարել անվտանգության գոտիների օգտագործմամբ, որոնք պետք է ամրացվեն կոնստրուկտիվ ճշտված և հուսալի էլեմենտից:

- Եռակցման աշխատանքներ իրականացնելիս անհրաժեշտ է հետևել, որպեսզի էլեկտրա և գազաեռակցված սարքերը գտնվեն ճանապարհներից և անցումներից մի կողմ և էլեկտրաեռացման սարքը և եռակցվող նյութը լինեն հողանցված:

- Խտացված գազով բալոնները պետք է տեղափոխել միայն հատուկ պատգարակի միջոցով: Բալոնին չի թույլատրվում մոտենալ յուղոտված հագուստով, արգելվում է նաև բալոնների մոտակայքում ծխելը:

- Արգելվում է տանիքում աշխատանքներն իրականացնելը, մշուշի, ամպրոպի և քամու 6 բալ արագությամբ գերազանցման դեպքում:

**4.8 Հակահրդեհային միջոցառումներ**

Շինարարական աշխատանքների ժամանակ անհրաժեշտ է՝

